Յուրաքանչյուր ընկերություն պարբերաբար մտորում է շուկայում և մարդկանց ուղեղներում իր զբաղեցրած տեղի մասին: Այս մտորումները հաճախ հանգեցնում են ռեբրենդինգ իրականացնելու անհրաժեշտությանը:

Թյուր կարծիք է ձևավորվել, որ բրենդի հաշվետու գում կամ ռեբրենդինգ իրականացնելը խոշոր ձեռնարկությունների մենաշնորհն է: Այս առումով անհրաժեշտ է գիտակցել, որ նշված գործընթացների հաջողությունը պայմանավորված է ոչ այնքան դրանց իրականացման ծավալներով, որքան ցուցաբերվող գրագետ մոտեցմամբ [1 34]:

Ռեբրենդինգը ապրանքային նշանների հետ իրականացվող աշխատանքների ամենաարմատական եղանակն է: Ռեբրենդինգի բաղադրիչներն են ռեսայլինգը, ռենեյմինգը և բրենդի վերադիրքավորումը: Կախված ընկերության առջև դրված նպատակներից և ռազմավարությունից՝ ընտրվում է նշված ձևերից մեկը:

Եթե ընկերությունը չի իրականացնում վերադիրքավորում, ապա բավարար է իրականացնել ռեստայլինգ՝ ոճի որոշակի փոփոխություն կամ թարմացում, կամ ռենեյմինգ՝ անվանափոխություն: Իսկ եթե ընկերությունը նպատակ է դնում ընդ-

լայնել կամ փոխել նպատակային լսարանը և ներգրավել այլ արժեքներ և մոտեցումներ ունեցողներին, ապա անհրաժեշտ է իրականացնել ռեբրենդինգ:

Իր բարդությամբ ռեբրենդինգի գործընթացը կարող է գերազանցել նոր ապրանքային նշանի ստեղծման գործընթացը: Այդ պատճառով ռեբրենդինգը նպատակահարմար է իրականացնել միայն այն դեպքերում, երբ հին ապրանքային նշանը բարոյապես մաշվում է և հնարավոր չի լինում այն ադապտացնել նոր իրողություններին: Բազում դեպքերում ռեբրենդինգը իրականացվում է ռեստայլինգի միջոցով, այսինքն տեղի է ունենում ապրանքային նշանների տեսքի թարմացում՝ առանց արմատական փոփոխությունների:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության ոլորտը անկում ապրեց: Այդ ժամանակահատվածի իրադրությունը կարելի է նկարագրել մեկ ցուցանիշով. այն է՝ ֆիքսված հեռախոսակապի բաժանորդների թիվը: Այդ ցուցանիշը անկախ Հայաստանի պայմաններում անկում ապրեց 2 տոկոսով: Սակայն ավելի մտահոգիչ էր այն հանգամանքը, որ երկար տարիների ընթացքում պետությունը ի գործու չեղավ իրականացնել ոլորտի արմատական բարեփոխումներ և ակտիվացնել այն:

1995 թվականին Հայաստանի Հանրապետության կապի նախարարության (այժմ կապի և տրանսպորտի նախարարություն) կողմից հիմնադրվեց «ԱրմենՏել» ընկերությունը: Ընկերության բաժնետոմսերի 49 տոկոսը պատկանում էր ամերիկյան «Trans World Telecom» ընկերությանը, 51 տոկոսը՝ ՀՀ կառավարությանը:

1996 թվականին սկսվեցին Երևան քաղաքի ցանցի թվայնացման աշխատանքները, որին նույն թվականին հետևեց առաջին GSM բազային կայանի տեղադրումը: ՀՀ տարածքում առաջին բջջային հեռախոսագանգը կատարվել է 1996թ-ի դեկտեմբերի 15-ին<sup>1</sup>:

---

<sup>1</sup> ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, URL: <http://mtc.am/index.php?menu1=34&menu2=45>

Հեռահաղորդակցության շուկայում «ԱրմենՏել» ընկերությունը գործում էր իբրև կարգավորվող մենաշնորհ: Նրան տրամադրվեց Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հեռահաղորդակցական ծառայությունների մատուցման մենաշնորհի իրավունք մինև 2013 թվականը:

1998 թվականին հունական «ՕՏԵ» ընկերությունը 142.5 մլն. ԱՄՆ դոլարով ՀՀ կառավարությունից ձեռք բերեց «ԱրմենՏել» ընկերության բաժնետոմսերի 90 տոկոսը, մյուս 10 տոկոսը մնաց ՀՀ կառավարության վերահսկողության ներքո: Ըստ կողմերի միջև կնքված համաձայնագրի՝ հունական կողմը պարտավորվում էր ՀՀ հեռահաղորդակցության ոլորտում կատարել 300մլն. դոլարի ներդրում հինգ տարվա ընթացքում, այսինքն մինև 2003 թվականը: Այդ ընթացքում «ԱրմենՏել» ընկերությունը գործարկեց մի շարք նոր ծառայություններ՝ մասնավորապես ձայնային փոստ, SMS, տրամադրվեցին նաև ինտերնետային ծառայություններ: Այդ ժամանակահատվածի կարևորագույն ձեռքբերումն է համարվում 2002թ-ին Հայաստանում շարժական հեռախոսակապի կանխավճարային համակարգի ներդրումը [3]:

2004թ-ին ՀՀ կառավարության կողմից հայտարարված մրցույթի արդյունքների համաձայն՝ ՀՀ տարածքում բջջային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստացավ «Գլ տելեկոմ» ընկերությունը, որը պատկանում էր Լիբանանը ներկայացնող գործարարներին: Գործունեություն իրականացնելու թույլատրագիր տրվեց մինչև 2019թ-ը: «Գլ տելեկոմ»-ը Հայաստանի Հանրապետության տարածքում ծառայություններ էր մատուցելու «ՎիվաՄեյլ» ապրանքային նշանի ներքո: Նախապատրաստական աշխատանքները ավարտվեցին 2005 թվականի ամռանը, և նույն թվականի հուլիսի մեկին «ՎիվաՄեյլ» ընկերության ցանցում կատարվեց առաջին զանգը<sup>2</sup>: Այդ օրը կարելի է համարել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության նոր դարաշրջանի սկիզբ: Այդ օրվանից հետո շատ կարճ ժամանակահատվածում ընկերությանը հաջող-

---

<sup>2</sup> VivaCell MTS URL: <http://www.mts.am/company/welcome-message>



վեց ստեղծել բավականին ընդարձակ բազա և ունենալ բաժանորդների բավական մեծ քանակ:

Մրցակցային գնային քաղաքականությունը, մատուցվող ծառայությունների բարձր որակը, ՀՀ տարածքում լայնարձակ ռադիոժամկույթի հիմնումը հնարավորություն տվեցին երկրորդ բջջային օպերատորին գլխավորել ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի զարգացման աշխատանքները: Նոր ընկերության մուտքը հնարավորություն տվեց աստիճանաբար բավարարելու ձևավորված մեծ պահանջարկը:

Արդեն 2008 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ կառավարությունը 15 տարի ժամկետով ֆրանսիական «Ֆրանս Տելեկոմ» ընկերության բջջային ծառայությունները ներկայացնող «Օրանժ» ընկերությանը պատկանող «Օրանժ Արմենիա» ընկերությանը տրամադրեց GSM 900, 1200 2Ghz հաճախականությունների համար լիցենզիա: Ընկերությունը առաջին զանգը ցանցում իրագործեց 2010 թվականի նոյեմբերի 5-ին:

Օրանժը ֆրանսիական Ֆրանս Տելեկոմ խմբի հիմնական ապրանքային նշանն է՝ աշխարհում հեռահաղորդակցության ոլորտի առաջատար օպերատորներից մեկը: Ընկերությունը աչքի է ընկնում նաև որակյալ ինտերնետ ծառայությունների մատուցմամբ: Դրա վառ ապացույցը առաջատարությունն է Եվրոպայում ADSL ինտերնետի բնագավառում


«Օրանժ Արմենիայի» նպատակն է դառնալ Հայաստանի հեռահաղորդակցության շուկայի հզոր մասնակից՝ նորարար առաջարկների, ճկուն գնային քաղաքականության և վաճառքի ու սպասարկման լայն ցանցի շնորհիվ:

Գործունեության առաջին ամսվա ընթացքում ընկերությունը ունեցավ 120հազ. բջջային կապի, 5000 հազար ինտերնետ կապի բաժանորդներ:

Ապրանքային նշանի տեսանկյունից ՀՀ բջջային կապի շուկան բավական գրավիչ տեսք ստացավ, քանի որ բջջային երկու օպերատորների ապրանքային նշանները դասվում են աշխարհի ամենաթանկ ապրանքային նշանների ոլորտում:

«ՎիվաՍեյլ-USU» ընկերությունը որդեգրել էր աստճանական ռեբրենդինգի քաղաքականություն: Այժմ ընկերությունը գտնվում է այդ գործընթացի վերջին փուլում, որը կարող է հանգեցնել «ՎիվաՍեյլ-USU» անվանման փոխարինմանը «USU Արմենիա» անվանմամբ: Այն կենթադրի նաև ապրանքային նշանի արմատական փոփոխություն: USU ընկերության ապրանքային նշանը կփոխարինի գործող ապրանքային նշանին: Այս գործընթացների նպատակահարմարությունը և հետևանքները պարզելու համար նախաձեռնեցինք և իրականացրինք սոցիոլոգիական հարցում Երևան քաղաքի մասշտաբով: Հարցմանը մասնակցեց 100 անձ: Հարցումը իրականացվեց երկու եղանակով դեմ առ դեմ հարցում և ինտերնետային հարցում, 75-25-ի տոկոսային հարաբերությամբ համապատասխանաբար: Այս համամասնությունը ընտրվել է այն պատճառով, որ դեմ առ դեմ հարցման ժամանակ հնարավոր է լինում պարզել հարցաթերթիկով չնախատեսված մի շարք հանգամանքներ, ինչը հնարավոր չէ ինտերնետային հարցման պարագայում: Բացի այդ, դեմ առ դեմ հարցման ժամանակ հնարավոր էր լինում տալ որոշ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ:

*Գծապատկեր 1<sup>3</sup>*



<sup>3</sup> Հեղինակի կողմից անցկացված հարցման արդյունքներ

«Ազդե՞լ է ապրանքային նշանը Ձեր ընտրության վրա» հարցը վերլուծության տեսանկյունից ունի անկյունաքարային բնույթ: Արձանագրված ցուցանիշը արտացոլում է ներկա իրականությունը: «ՎիվաՍելլ-USU» ընկերության պարագայում «ոչ» պատասխանի նման մեծ տեսակարար կշիռը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Դրանք են.

- ՀՀ կապի շուկայի կոնյուկտուրան
- սակագնային գործոնի գերակայությունը բջջային օպերատորի ընտրության հարցում

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հարցվածների այն մասը, որը «ՎիվաՍելլ-USU»-ի բաժանորդ էր, ընկերության ծառայություններից օգտվել է առաջին իսկ օրից:

Կապի շուկայի վերլուծության արդյունքում նկարագրված այն պայմանները, որոնց ժամանակ ընկերությունը մուտք գործեց ՀՀ կապի շուկա, ապրանքային նշանի դերը դարձնում էին երկրորդական, քանի որ չկար ընտրության լայն հնարավորություն, մրցակից ընկերությունը իր գործունեությանը հասցրել էր վայելել հասարակության մեծամասնության հակակրանքը և այլն: Ապրանքային նշանի դերը ավելի զգալի կլիներ մրցակցային պայմանների պարագայում: Հարցվողների այն հատվածն էլ, որի համար «ՎիվաՍելլ-USU»-ը չի հանդիսացել առաջին բջջային օպերատոր, օպերատորի փոփոխության հարցում առաջնորդվել են կապի որակ և մատուցվող ծառայությունների սակագներով:

## Նկատել էք ապրանքային նշանի փոփոխությունը ձևավորումից ի վեր

■ ԱՅՈ 52% ■ ՈՉ 48%




«Նկատել ե՞ք ապրանքային նշանի փոփոխությունը ձևավորումից ի վեր» հարցը վերաբերում էր այս աշխատանքի նախորդ ենթախմբերում արդեն իսկ նկարագրված փոփոխություններին:

Հարցվողների պատասխանները այս պարագայում գրեթե կիսվել են: Անհրաժեշտ է մատնանշել այն հանգամանքը, որ «այո» պատասխանողների մեծ մասի համար հուշող հանգամանք էր ընկերության անվանման փոփոխությունը: Այս եզրահանգմանը նպաստել է այն, որ հարցվողներից շատերը մտաբերում էին ապրանքային նշանի միայն վերջին փոփոխությունը, այն պարագայում երբ քննարկվող ապրանքային նշանը փոփոխության է ենթարկվել առնվազն 3 անգամ: Սա արտահայտում է ռեսթայլինգի նկատմամբ հարցվողների անտարբեր վերաբերմունքը:

<sup>4</sup> Հեղինակի կողմից անցկացված հարցման արդյունքներ

**Ինչպե՞ս կվերաբերվեք «ՎիվաՄեյլ-ՄՏՄ»-ի «ՄՏՄ Արմենիա» վերանվանմանը**

■ Դրական 33% ■ Բացասական 26% ■ Չեզոք 41%



«Ինչպե՞ս կվերաբերվեք «ՎիվաՄեյլ-ՄՏՄ»-ի «ՄՏՄ Արմենիա» վերանվանմանը» հարցին «դրական» պատասխանողների համար շարժառիթ էր նոր անվանման մեջ Արմենիա բառի առկայությունը: Բացասական պատասխան տվող հարցվողները հանդիսանում էին ընկերության նվիրված բաժանորդներ և նրանց համար անվանափոխությունը անընդունելի էր, բացասական պատասխան հնչել է նաև մրցակից ընկերությունների բաժանորդ հանդիսացող հարցվողների մեծամասնության կողմից:

Քանի որ «չեզոք» պատասխանողների տեսակարար կշիռը բավական մեծ է, և այս հարցը հարցման նպատակի տեսանկյունից կարևոր նշանակություն ունի, հարկ է անդրադառնալ «չեզոք» պատասխանող զանգվածի բաղադրությանը և վերլուծել ընդհանուր գործընթացի արդյունքի վրա դրա ազդեցությունը:

Բաղադրություն ասելով՝ այս դեպքում հասկանում ենք հարցվողների տարանջատումը, դրա համար որպես չափորո-

<sup>5</sup> Հեղինակի կողմից անցկացված հարցման արդյունքներ

շիչ ընտրելով նրանց այս կամ այն բջջային օրերատորի բաժանորդ հանդիսանալու հանգամանքը:

Բջջային օպերատորի ընտրության պարագայում «չեզոք» պատասխանողները առաջնորդվում էին այլ չափորոշիչներով, այդ չափորոշիչներին անդրադրձանք նախորդ հարցից մեկի վերլուծության ժամանակ:

Առավել նպատակահարմար և արդյունավետ ստացվեց ՀՀ հեռահաղորդակցության շուկայի մյուս մասնակցի «Արմենտել» ՓԲԸ-ի՝ «Վիմպելկոմ» ընկերության կողմից իրականացրած ռեբրենդինգը և «Beeline» ապրանքանիշի ներքո ծառայությունների մատուցման գործընթացը: Սա պայմանավորված էր նաև 2004 թվականին նույն ընկերության կողմից Ռուսաստանի Դաշնությունում իրականացրած ռեբրենդինգի հաջող փորձով:

2004 թվականին ընկերության խորհրդանիշ ընտրվեց մեղուն, որը խորհրդանշելու էր բջջային կապին բնորոշ շարժականություն: Սակայն մեղուն հաճախորդների մոտ առաջացրեց ոչ միանշանակ զգացողություններ, որոնք հանգեցրին մեղվից հրաժարվելու գաղափարին: Մեղվի փոփոխության հետ չպահպանվեց նաև ապրանքային նշանի կապույտ գույնը, քանի որ ըստ հոգեբանների կապույտ գույնը չի դրդում ակտիվ գործողությունների, ինչն էլ հանդիսանում էր ռեբրենդինգի իրականացման փիլիսոփայությունը:

Ռեբրենդինգի ընթացքում փորձ արվեց օգրագործել ապրանքային նշանի անվանման ԲԻ մասնիկը և ընկերության կարգախոս ընտրվեց՝ *be inspired, be involved*, սակայն այս մտահաղացումն էլ երկար կյանք չունեցավ: Արդյունքում որոշվեց խորհրդանշական մակարդանում պահպանել մեղվի կերպարը նոր ապրայքային նշանի վրա(տես նկ.7): Այն իր արտացոլումը գտավ ապրանքային նշանի վրա առկա սև, դեղին գծերով: Ընկերությունը ռեբրենդինգ իրականացնելու վրա ծախսեց 2մլն. ԱՄՆ դոլլար, սակայն արդյունքները արդարացրին բոլոր սպասումները: Janson&Partners ընկերության ներկայացրած տվյալների համաձայն՝ «Բիլայնի» մասնաբաժինը

շուկայում աճեց 2 տոկոսով, իսկ եկամուտները՝ 36 տոկոսով, համեմատության համար նշենք, որ նույն 2005 թվականի տվյալներով գլխավոր մրցակից ՄՏՍ-ի եկամուտը աճել էր 28 տոկոսով:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ռեբրենդինգի իրականացումը հանգեցնում է մասնագետների տարակարծությանը: Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ռեբրենդինգ իրականացնելու կողմնակիցները մատնանշում են այն հանգամանքը, որ ստեղծված պայմաններում մարքեթինգային հետազոտություններ իրականացնելն ավելի մատչելի է դարձել: Այդ կերպ նրանք ցանկանում են արձագանքել շուկայում ձևավորված նոր կոնյեկտուրային:

Ֆինանսական ճգնաժամի պայմաններում նպատակահարմար է իրականացնել ռեբրենդինգ այն դեպքում, երբ ընկերությունը իր գործունեության ուղղվածությունը փոխում է պրեմիում հատվածից դեպի էկոնոմ հատված: Երբ ընկերությունը իրականացնում է նոր գնային քաղաքականություն առանց ռեբրենդինգի, էկոնոմ հատվածի ներկայացուցիչների մոտ կարող է դա չտալ սպասված արդյունքը, քանի որ չփոփոխված ապրանքային նշանը միջին դասի սպառողների մոտ խորհրդանշում է բարձր գին:

Ընկերության հայաստանյան ռեբրենդինգը հետապնդում էր այլ նպատակներ: Առաջին հերթին այն պայմանավորված էր սեփականատիրոջ փոփոխությամբ և ընկերության՝ այն ժամանակ ունեցած ոչ միանշանակ համբավի փոփոխության անհրաժեշտությամբ:

**Առանցքային հասկացություններ.** *ապրանքային նշան, բրենդ, ռեբրենդինգ, բջջային օպերատոր, հեռահաղորդակցության ոլորտ, կանխավճարային համակարգ, ինտերնետային հաճախականություն, լայնարձակ ռադիոժաձկույթ, մրցակցային գին, մարքեթինգային հետազոտություն, ֆիքսված հետախոսակապ:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ребрендинг», Овчинникова О. Г, Альфа Пресс Москва 2007թ. Ст. 36
2. VivaCell MTS URL: <http://www.mts.am/company/welcome-message> (Վերջին մուտքը՝ 26.06. 2012թ.)
3. Beeline. URL: <http://about.beeline.am/am/about/company.wbp> (Վերջին մուտքը՝ 26.06. 2012թ.)
4. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն URL: <http://mtc.am/index.php?menu1=34&menu2=45> (Վերջին մուտքը՝ 03.06. 2012թ.)

**Дж. А. ТАДЕВОСЯН, Г. С. ЖАМАКОЧЯН  
РОЛЬ ТОРГОВЫХ МАРОК И ЭФФЕКТИВНОСТЬ  
РЕБРЕНДИНГА НА ТЕЛЕКОММУНИКАЦИОННОМ  
РЫНКЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

### Резюме

В статье анализированы современные тенденции развития международного брендинга и ребрендинга. Исследованы основные особенности телекоммуникационного рынка Армении и деятельность основных операторов мобильной связи. Рассмотрены причины ребрендинга двух операторов VivaCell-MTS и Beeline. Был рассмотрен также опыт ребрендинга оператора Beeline в России и проведены параллели с ребрендингом в Армении. В статье подведены итоги опроса по поводу ребрендинга VivaCell-MTS, степень ее эффективности и влияние на позиции на рынке мобильной связи.

**Ключевые понятия:** *торговая марка, бренд, ребрендинг, оператор мобильной связи, телекоммуникаций сектор, предоплатная система расчетов, Интернет экспансивного покрытия, конкурентоспособная цена, маркетинговые исследования, фиксированная телефонная связь.*



**J. A. TADEVOSYAN, G.S ZHAMAKOCHYAN**  
**ROLE OF TRADEMARKS AND EFFICIENCY OF**  
**REBRANDING IN THE TELECOMMUNICATIONS**  
**MARKET OF REPUBLIC OF ARMENIA**

**Summary**

The paper analyzes the current trends of global branding and rebranding. The main features of the telecommunications market and the activity of Armenia major mobile operators. The reasons for the re-branding of the two operators VivaCell-MTS and Beeline. Was considered as the experience of rebranding operator Beeline in Russia and held poraleli with rebranding in Armenia. The article summarized the poll on rebranding VivaCell-MTS, the degree of its effectiveness and impact on the position in the mobile market.

**Key concepts.** *trademark, brand, rebranding, mobile operator, telecommunication, prepaid system, internet rate expansive coverage, competitive price, marketing research, fixed-line telephony*

**«ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐ»  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԸՈՒՐՁ**

**Ձ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Հ. ԵՐԻՑՅԱՆ**

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի կարևորագույն օրինաչափություններից մեկը շարունակում է մնալ գլոբալացումը: Այն ազգային տնտեսությունների ձուլումն է մեկ ընդհանուր համաշխարհային համակարգի մեջ, որը հիմնվում է կապիտալի ազատ շարժի, աշխարհի նոր տեղեկատվական բացության, գիտատեխնիկական հեղաշրջման, հեռահաղորդակցության մերձեցման, համամոլորակային գիտական հեղաշրջման, տրանսպորտի և տեխնոլոգիաների նոր ձևերի վրա: Հենց այս բարդ և բազմաբնույթ գործընթացի բոլոր տարրերը միջազգային տնտեսական կորպորացիաների գործունեության ընդլայնման ինչպես նախադրյալներ են, այնպես էլ՝ հետևանքներ:

Այսպիսով, այսօր աշխարհը հայտնվել է նոր վերաբաժանման շեմին, բայց ոչ թե ռազմաքաղաքական, այլ տնտեսական, որտեղ «խաղի» հիմնական մասնակիցները դարձել են ոչ միայն երկրները և երկրների խմբերը, այլև միջազգային տնտեսական կորպորացիաները: Արտադրության և կապիտալի միջազգայնացման, արտաքին առևտրի ազատականացման գլոբալ միտումները միջազգային տնտեսական կորպորացիաներին տեղափոխել են համաշխարհային տնտեսության զարգացման առանցքի կենտրոն: Այս գործընթացը, որն առավել հաճախ անվանում են վերազգայնացում, հանգեցնում է համաշխարհային վերարտադրության գործընթացների ռացիոնալացմանը և տարբեր երկրներում տնտեսական պայմանների հավասարեցմանը:

Վերազգայնացումը, անկասկած, համարվում է ժամանակակից համաշխարհային տնտեսության զարգացման կարևորագույն միտումներից մեկը: Տնտեսապես այն պայմանավորված է կապիտալի շարժով հարաբերական ավելցուկ ունե-

ցող երկրներից դեպի կապիտալի պահանջարկ ունեցող երկրներ, որտեղ կապիտալի արտահոսքի հնարավորությամբ և անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ավելցուկային են համարվում արտադրության մյուս գործոնները (աշխատանքը, հողը, օգտակար հանածոները), և որոնք կապիտալի անբավարար քանակի պատճառով չեն կարող ռացիոնալ օգտագործվել վերարտադրական գործընթացներում:

Վերագգայնացումը գլոբալ մասշտաբով համաշխարհային տնտեսության գործունեության միասնականությունն ապահովող հիմնական «ուրվագծերից» մեկն է: Համաշխարհային տնտեսության ներկա զարգացումներում այն արտահայտվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների (այսուհետ՝ ՕՈՒՆ) դինամիկ աճի, ինչպես նաև օրեցօր խորացող աշխատանքի տեխնոլոգիական բաժանման գործընթացներում<sup>1</sup>, ինչը և ուղեկցվում է տարբեր երկրներում խոշոր գիտաարտադրական միավորների, մասնավորապես վերագգային կորպորացիաների (այսուհետ՝ ՎԱԿ) ձևավորմամբ:

ՎԱԿ-ի հիմնական ձևավորումը կապված է 20-րդ դարի 60-ական թվականների հետ, երբ արևմտյան առաջատար երկրների ֆիրմաները սկսեցին իրականացնել կապիտալի մասսայական կանչ: Գիտատեխնիկական առաջադիմությունը ևս նպաստեց դրանց ձևավորմանը: Հասարակական աշխատանքի բաժանման խորացումը և նոր տեխնոլոգիաների մուտքը հնարավորություններ ստեղծեցին առանձին տեխնոլոգիական գործընթացների տարածման համար, իսկ տրանսպորտային և կապի միջոցների առաջացումը նպաստեցին այդ հնարավորությունների իրականացմանը:

ՎԱԿ-ն իրենց գործունեության սկզբնական փուլում մի շարք բանավեճերի առիթ հանդիսացան: Ոմանց մոտ նրանց գործունեությունը դիտարկվում էր որպես ավերիչ, որը պայմա-

---

<sup>1</sup> Արտասահմանյան գրականության մեջ, մասնավորապես ֆրանսիացի հեղինակների աշխատություններում աշխատանքի միջազգային բաժանումը և աշխատանքի տեխնոլոգիական բաժանումը հավասարազոր հասկացություններ են:

նավորված է արդյունաբերականացման բացասական հետևանքներով: Բոլոր դեպքերում 70-ական թվականներն ընթացան ՎԱԿ-ի բացասական գնահատումներով որպես տնտեսական, քաղաքական և սոցիալական հակասությունների սրման գործոններ: 80-ականներին արդեն նկատվեցին էական վերափոխումներ վերագրային կորպորացիաների՝ համաշխարհային տնտեսության զարգացման գործում ունեցած դերի գնահատման հարցում: Այս ժամանակաշրջանից սկսած և հատկապես 21-րդ դարում՝ ՎԱԿ-ը սկսեց ավելի մեծ դեր ունենալ միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Դրանք նպաստում են արտադրության արդյունավետության և թողարկվող արտադրանքի մրցունակության բարձրացմանը, տեխնոլոգիաների, գիտելիքների և փորձի փոխանակմանը, աշխատատեղերի ստեղծմանը:

Եվ պատահական չէ, որ համաշխարհային տնտեսության գլոբալացման արդի փուլում առանցքային տեղ են զբաղեցնում ՎԱԿ-ը, որոնք նպաստում են գիտատեխնիկական զարգացման արագ առաջընթացին, որակի և արտադրության արդյունավետության բարձրացմանը, կատարելագործում են կառավարման համակարգերը և մշակում գործարարության վարման նոր ճանապարհներ: Բազմազգ ձեռնարկատիրության ձևավորումն ու զարգացումը ՎԱԿ-ի գործունեության դիվերսիֆիկացման և ժամանակակից քաղաքակրթության նորանոր դրսևորումների հիման վրա պայմանավորված է այնպիսի շարժառիթներով, ինչպիսիք են.

- արտադրության ծախսերի զգալի կրճատումը արտադրության ծավալների աճի, էժան և որակյալ աշխատուժի ներգրավման միջոցով
- նոր շուկաների գրավումը, հումքային ռեսուրսների օգտագործումը
- տեխնոլոգիական տրանսֆերտների վերահսկողության հնարավորությունը, ինչը այդ ֆիրմաներին թույլ է տալիս պահպանել գերիշխող դիրքեր միջազգային շուկայի համապատասխան հատվածներում

- սիներգիկ էֆեկտ:

Այսպիսով, միջազգային տնտեսությունը վերածվում է միջազգային արտադրության, որտեղ գլոբալ ֆիրման դառնում է գլոբալ արտադրության գլխավոր սուբյեկտը: 21-րդ դարի սկզբին հաշվվում էր ավելի քան 70 հազ. ՎԱԿ՝ իրենց 850 հազ. մասնաճյուղերով: Մայր-կազմակերպությունները հիմնականում տեղակայված են զարգացած երկրներում (50.2 հազ.), մինդեռ մասնաճյուղերի գերակշիռ մասը գտնվում է զարգացող երկրներում (495 հազ.): Համաշխարհային արդյունաբերության գրեթե կեսը և արտաքին առևտրի ավելի քան 2/3-ն իրականացվում է ՎԱԿ-ի կողմից: Դրանք տիրապետում են նոր տեխնոլոգիաներին, նոու-հաուների նկատմամբ լիցանզիաների և պատենտների մոտ 80%-ին: ՎԱԿ-ի վերահսկողության ներքո են գտնվում որոշակի շուկաներ, մասնավորապես՝ ցորենի, սուրճի, եգիպտացորենի, անտառանյութի, ծխախոտի, ջուտի և երկաթի համաշխարհային շուկաների 90%-ը, պղնձի և թոքսիտի՝ 58%-ը, թեյի և ձիթապտղի՝ 80%-ը, ադամանդի, բնական կաուչուկի և չմշակված նավթի՝ 75%-ը: Ամերիկյան և արտասահմանյան ՎԱԿ-ի կողմից իրականացվում է ԱՄՆ-ի արտահանման գրեթե կեսը, Մեծ Բրիտանիայում՝ 80%-ը, Սինգապուրում՝ 90%-ը: ՎԱԿ-ը համարվում են գործատու ավելի քան 150 մլն. մարդկանց համար, ովքեր օրական արտադրում են մոտ 1 մլրդ. դոլարի ապրանքներ և ծառայություններ: ՎԱԿ-ի հիմնական մասը պատկանում են ԱՄՆ-ին, ԵՄ անդամ երկրներին և Ճապոնիային: Կապիտալի համաշխարհային շուկայի առաջատարներ են համարվում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և ԵՄ անդամ այլ երկրների վերազգային կորպորացիաները:

Այսպիսով, երրորդ հազարամյակի շեմին ՎԱԿ-ն արտացոլում են համաշխարհային տնտեսության զարգացման արդի օրինաչափությունները, որոնց դրսևորումներից և ազդեցություններից անմասն չէ նաև ՀՀ տնտեսությունը: Ուստի և ՎԱԿ-ի գործունեության ուսումնասիրությունն ու դրանց առնչվող հիմնախնդիրների բացահայտումը և՛ տեսական, և՛ գործնա-

կան առումներով բխում է հայաստանյան տնտեսության հետագա զարգացման շահերից և միջազգային շուկաներին ինտեգրման անհրաժեշտությունից:

Այս հանգամանքն է, որ այժմեական ու խիստ հրատապ է դարձնում համաշխարհային տնտեսության՝ որպես մարդկային քաղաքակրթության նորովի դրսևորման հետ կապված հասկացությունների ու գործընթացների ուսումնասիրումը:

Տնտեսագիտական մասնագիտական գրականության մեջ այսօր դեռևս բացակայում է «Վերազգային կորպորացիաներ» հասկացության միասնական բնորոշումը:

Այդ են վկայում հետևյալ սահմանումները.

1. Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) բնորոշմամբ ՎԱԿ-ը երկու և ավելի ընկերություններ են, որոնք տնտեսական գործունեություն են ծավալում միջազգային մակարդակով և կառավարվում են մեկ կամ մի քանի կենտրոններից: ՄԱԿ-ի փորձագետները ՎԱԿ-ին են վերագրում այն կորպորացիաները, որոնք իրականացնում են ցանկացած արտադրական գործունեություն կամ մատուցում են ծառայություններ՝ ազգային պետության սահմաններից դուրս:
2. Վ.Ա. Յվետկովի և Ե.Վ. Լենսկիյի տեսության համաձայն՝ ՎԱԿ-ն այն կազմակերպությունն է (ֆինանսաարտադրական միավորումը), որը կառավարում է հիմնադրման երկրի սահմաններից դուրս գտնվող արտադրական կամ ծառայություններ մատուցող համալիրները, ինչպես նաև իրեն է պատկանում տարբեր երկրներում գտնվող ներկայացուցչությունների ու մասնաճյուղերի ընդգրկուն ցանցը, որի հետևանքով այդ կազմակերպությունը զբաղեցնում է զգալի դիրք այս կամ այն ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ու իրացման ոլորտում[1, 19]:
3. Գ.Պ. Օվչիննիկովը գտնում է, որ ՎԱԿ-ը միջազգային ձեռնարկություններ են, որոնք ունեն իրենց մասնաճյուղերը երկու և ավելի երկրներում, որոնք կառավարվում

են մեկ կամ մի քանի կենտրոնների կողմից, իսկ որոշումների ընդունման ընթացակարգը ենթադրում է համաձայնեցում ընդհանուր ռազմավարության և քաղաքականության ընդունման, ռեսուրսների և տեխնոլոգիաների, ինչպես նաև պատասխանատվության տեղաբաշխման հարցերում, ինչը հետապնդում է մեկ նպատակ՝ շահույթի ստացում [2, 43]:

4. ՎԱԿ-ն այն կազմակերպությունն է, որն ունի տարբեր երկրներում դուստր ձեռնարկություններ, անգամ՝ համաշխարհային մակարդակով, որոնց վերահսկում է մասնակիորեն կամ ամբողջովին, սակայն միաժամանակ դրանց կառավարումը և վարչական վերահսկողությունը որոշակիորեն կենտրոնացված են: Այսպիսով՝ ՎԱԿ-ը ձեռնարկություն է, որի բաժնետոմսերը «հատում են» տարբեր երկրների սահմանները [3]:
5. ՎԱԿ-ն այն կազմակերպությունն է, որը դուստր ձեռնարկությունների միջոցով տեղակայված է բազմաթիվ երկրներում, ընդ որում այդ կազմակերպությունը ամբողջովին կամ մասնակիորեն տնօրինում է դուստր ընկերությունների կապիտալը [4, 831]:
6. Համաձայն ֆրանսիացի տնտեսագետ Չարլզ-Ալբերտ Միշակալի [5, 17] կարծիքի՝ ՎԱԿ-ն այն կազմակերպությունն է, որն արտադրում է տնտեսական արդյունքներ բազմաթիվ երկրներում: Այսինքն՝ բաժնետերերը միևնույն երկրից չեն, կամ այդ կազմակերպությունը տեղակայված է բազմաթիվ երկրներում, որոնք որդեգրել են համաշխարհային մակարդակով միևնույն ռազմավարությունը ու կազմակերպչական ձևը:
7. Ռ. Ալան Հեդլին ՎԱԿ-ին տալիս է հետևյալ սահմանումը. «Ցանկացած ձեռնարկություն, որն ՕՈՒՆ-ների միջոցով վերահսկում կամ տիրապետում է մեկից ավելի երկրներում գտնվող կազմակերպությունների ակտիվներ, արտադրում է ապրանքներ կամ մատուցում ծառայություններ իր ծագման երկրի սահմաններից դուրս

կամ զբաղվում է համաշխարհային արտադրությամբ» [6, 215]:

8. Սակայն վերջին տարիներին UNCTAD-ի (ՄԱԿ-ի առևտրի և արդյունաբերության զարգացման կոնֆերանսի) փորձագետները առաջարկել են ՎԱԿ-ի նոր՝ ավելի մեղմ սահմանումներ և չափանիշներ, որոնք ուղղվում և վերահրապարակվում են ամեն տարի համաշխարհային ներդրումների մասին զեկույցում [7, 15]: Այսպես, ՎԱԿ-ն այն կազմակերպությունն է, որը բաղկացած է գլխավոր կամ մայր կազմակերպությունից և իր արտասահմանյան ներկայացուցչություններից՝ առնվազն երկու երկրում, ընդ որում այդ կազմակերպությունը տնօրինում է իր արտասահմանյան ձեռնարկությունների կապիտալի նվազագույնը 10%-ը, որը համարվում է տրամաբանական շեմ այդ կազմակերպությունների ակտիվների նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու համար:

Այսպիսով, հիմք ընդունելով ՎԱԿ-ի բնորոշման վերաբերյալ տարբեր երկրների տնտեսագետների և մի շարք միջազգային տնտեսական կառույցների կողմից առաջարկված մեկնաբանումները կարող ենք ներկայացնել այն առավել ընդհանուր բնութագրիչները, որոնց հանդիպում ենք վերոնշյալ սահմանումներում.

1. միջազգային բնույթի գործարարության իրականացում ՕՈՒՆ-ների միջոցով
2. բավականին հզոր կառույց, ինչը թույլ է տալիս օգտագործել միջազգային տնտեսական գործունեության ողջ ներուժն ու ու մեխանիզմը
3. ֆիրման իրացնում է իր թողարկած արտադրանքը մեկից ավել երկրներում
4. ֆիրմայի կողմից իրականացվող գործառույթների վերազգային բնույթ



5. մասնաճյուղերի, ներկայացուցչությունների կամ դուստր կազմակերպությունների առկայություն երկու և ավել երկրներում
6. շուկայում մենաշնորհային դիրքերին բնորոշ տարրերի առկայություն
7. ռազմավարական որոշումներ ընդունելիս միասնական գլոբալ ռազմավարություն բոլորի համար
8. մայր կազմակերպությունը տնօրինում և վերահսկում է մյուս ընկերությունների ակտիվների և կապիտալի զգալի մասը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված առանձնահատկությունները՝ մենք առաջարկում ենք ՎԱԿ-ի բնորոշման հետևյալ սահմանումը. *«ՎԱԿ-ն այն կազմակերպությունն է, որի արտադրական և առևտրային գործունեությունը ծավալվում է ազգային պետության սահմաններից դուրս գտնվող առնվազն երկու և ավելի երկրներում, անկախ կազմակերպաիրավական ձևերից և գործունեության ոլորտներից, ներառում է տարրեր միավորումներ, վերահսկում է այդ միավորումների կապիտալի ու ակտիվների զգալի հատվածը, վարում է միասնական ռազմավարություն: ՎԱԿ-ն իր գործունեությամբ ակտիվորեն նպաստում է աշխատանքի միջազգային բաժանման հետագա խորացմանը և համաշխարհային տնտեսության միջազգայնացման գործընթացներին՝ դրանով իսկ նպաստելով համաշխարհային տնտեսության մեջ նոր արժեհամակարգերի ձևավորմանը»:*

Տիրապետելով հզոր արտադրական կարողությունների՝ ՎԱԿ-ը իրականացնում են այնպիսի արտադրատնտեսային քաղաքականություն, որն ապահովում է արտադրության և ապրանքային շուկայի պլանավորման բարձր արդյունավետություն: Այս առումով իրենց արտասահմանյան մասնաճյուղերի հետ հարաբերություններում շատ ՎԱԿ-եր նրանց առավելագույն ազատություն են տալիս՝ դրանց կարգավիճակը մոտեցնելով անկախ ֆիրմաների: Այդպիսի մասնաճյուղերի կապերը իրենց մայր ընկերության հետ հիմնվում են արտասահ-

մանյան մասնաճյուղերի ակտիվներում մայր ընկերության սեփականության որոշակի բաժնի իրավունքի վրա, ինչպես նաև մասնաճյուղին տեխնոլոգիական և ֆինանսական աջակցության ապահովման վրա: Ընդ որում, մայր ընկերությունը մեծ ուշադրություն չի դարձնում արտասահմանյան մասնաճյուղի գործունեության վերահսկմանը այնքան ժամանակ, քանի դեռ այն աշխատում է շահույթով:

Միևնույն ժամանակ հատուկ ընդունող երկրի շուկային ուղղված ապրանքների ու ծառայությունների արտադրության ռազմավարությանը համապատասխան՝ ՎԱԿ-ի շատ գլխամասային ընկերություններ իրենց արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությունը կարգավորում են՝ հաշվի առնելով ազգային շուկաների առանձնահատկությունները: Այսպիսի ռազմավարության ՎԱԿ-ը դիմում են սոցիալ-մշակութային և բնական տարբերությունների, որոշ ընդունող երկրների կողմից կիրառվող առևտրային /տեխնիկական/ արգելքների ՎԱԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի կողմից արտադրանքի թողարկման համար տեղական շուկայում անհրաժեշտ բաղադրամասների գնման պահանջի պատճառով: Այսպիսի ռազմավարությունը հատուկ է սննդամթերքի և հագուստի արտադրությամբ զբաղվող ՎԱԿ-ի համար: Բայց ապրանքների ու ծառայությունների արտադրության այլ ճյուղերում նույնպես ՎԱԿ-ը ստիպված են հետևել ընդունող երկրում պահանջարկի առանձնահատուկ պայմաններին:

ՎԱԿ-ի գործունեության հիմնական առանձնահատկություններից է այսօր արտադրության ու ծառայությունների դիվերսիֆիկացիան: Չարգացման ողջ ընթացքում ՎԱԿ-ը ձեռք են բերել, որպես կանոն, բազմաճյուղ բնույթ: Նրանցից խոշորագույնները ներառում են իրենց մեջ տասնյակ արտադրական և իրացման ընկերություններ, գիտահետազոտական կենտրոններ, ֆինանսական կառույցներ, տասնյակ, հաճախ նույնիսկ հարյուրավոր մասնաճյուղեր և դուստր ձեռնարկություններ՝ երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:

Մեծ չափերը կորպորացիաներին տալիս են մի շարք առավելություններ: Առաջինը զանգվածային արտադրության կազմակերպումն է և համապատասխանաբար մասշտաբից տնտեսումը: Նշանակալից ֆինանսական պաշարների կենտրոնացումը թույլ է տալիս մեծ կորպորացիաներին ներդնել միջոցներ խոշոր ներդրումային նախագծերի և գիտատեխնիկական ծրագրերի իրականացման մեջ, ինչը փոքր բիզնեսի ուժերից վեր է: Երկրորդ՝ ճկուն արտադրական համակարգերի ներդրմամբ կորպորացիաները սկսեցին ստանալ այսպես կոչված «տնտեսում բազմազանությունից»: Հաշվի առնելով առաջարկի, սպառողների կոնկրետ պահանջմունքների դիֆերենցումը՝ նրանց մոտ առաջացավ զանգվածային արտադրության պայմաններում արտադրանքի սպառողական հատկանիշները դիֆերենցելու հնարավորություն:

Կորպորացիաների գործունեության բազմաճյուղային բնույթի ուժեղացման միտումների մասին վկայում են հետևյալ տվյալները: ԱՄՆ-ի 500 խոշոր ՎԱԿ-ից յուրաքանչյուրը ձեռնարկություններ ունի միջինը 11 ճյուղերում, իսկ առավել հզորներն ընդգրկում են ավելի քան 30-50 ճյուղեր: Ամերիկյան կորպորացիաների առաջին տասնյակն ունի ընկերություններ միջին հաշվով 60 ճյուղերում: Անգլիայի առաջատար 100 արդյունաբերական ՎԱԿ-երի մեջ առավել բազմաճյուղ են 96-ը, Գերմանիայում՝ 78-ը, Ֆրանսիայում՝ 84-ը, Իտալիայում՝ 90-ը [8, 62]:

Կորպորացիայի բազմաճյուղ բնույթը երևան է գալիս արտադրության ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական միավորման մեջ: ԱՄՆ-ում նավթային 20 խոշոր ընկերությունները վերահսկում են նավթի ամերիկյան պաշարների 4%-ը, նրա արդյունահանման 60%-ը, նավթավերամշակման ավելի քան 80%-ը, նավթի և նավթամթերքի ողջ վաճառքի 70%-ը: Նմանատիպ իրավիճակ է տիրում մետալուրգիական, քիմիական, փայտավերամշակման և մի շարք այլ ընկերություններում: Վերջին 10-15 տարիների ընթացքում կորպորացիաների գործունեության ընթացքում միջերկրայինի հետ համատեղ

շեշտը ավելի շատ տեղաշարժվում է դեպի միջճյուղային դիվերսիֆիկացում, այսինքն՝ մի շարք տարբեր ճյուղերում արտադրական գործունեության ոլորտի ընդլայնում:

ՎԱԿ-ի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն դրա խոշոր մասշտաբներով, այլև նրանով, որ գլխամասային ընկերությունների և նրա արտասահմանյան մասնաճյուղերի միջև փոխանակությունը կատարվում է տրանսֆերտային գներով: Միջֆիրմային մատակարարումների առավելությունը կայանում է նրանում, որ դրանք իրականացվում են ոչ թե համաշխարհային, այլ տրանսֆերտային /ներկորպորացիոն/ գներով, որոնք կարող են էականորեն տարբերվել համաշխարհային գներից՝ կախված ստեղծված իրավիճակից: Տրանսֆերտային գներ են համարվում ՎԱԿ-ի կառուցվածքային ստորաբաժանումների միջև փոխանակվող միջանկյալ ապրանքների՝ ՎԱԿ-ի կողմից կարգավորվող գները:

Միջազգայնացման մոդելի հեղինակները կարծում են, որ տրանսֆերտային գները առաջին հերթին ՎԱԿ-ի կողմից ոչ կատարյալ շուկաների /որտեղ նրանք գործում են/ նկատմամբ նրանց պատասխան քայլն է: Այդ շուկաներում գործում են հարկերի տարբեր դրույքաչափեր և արտարժույթային վերահսկողության տարբեր կանոններ, տարբեր պետական քաղաքականություն է իրականացվում արտասահմանյան ապրանքների, ծառայությունների ու կապիտալի նկատմամբ: Արդյունքում ՎԱԿ-ի համար առաջանում են տրանսակցիոն ծախսեր, այսինքն՝ ծախսեր, որոնք կապված են ոչ այնքան արտադրության, որքան այլ տնտեսական գործարքների հետ: Եվ երկրորդ՝ որոշ ապրանքների /տվորաբար կիսաֆաբրիկատների և բաղադրիչների/ և ծառայություններ /տվորաբար տեխնոլոգիական և այլ/ համար, որոնք փոխանակվում են ՎԱԿ-երի ստորաբաժանումների կողմից, չկան համաշխարհային գներ:

Որպեսզի որոշենք, թե ինչքա՞ն ու ո՞ր ուղղությամբ են տրանսֆերտային գները տարբերվում համաշխարհային գնե-

րից, բավական է միայն իմանալ՝ ի՞նչ գնով է կորպորացիայի մի ստորաբաժանումը որևէ ապրանք մատակարարում իր արտասահմանյան մասնաճյուղին, և ի՞նչ գնով է նույն ապրանքը մատակարարվում նույն երկիր անկախ վաճառողների և գնորդների կողմից: Մեծամասամբ, երբ ՎԱԿ-ը իրենց երկրում հարկերը և արտասահման ապրանքը արտահանելիս ներմուծման մաքսատուրքերը նվազեցնելու նպատակ են հետապնդում, տրանսֆերտային գները համաշխարհային գներից բավական ցածր են սահմանվում: Միևնույն ժամանակ եթե նպատակ է հետապնդվում իրենց երկրում շահույթը ազատել մեծ հարկումից, ՎԱԿ-ը իրենց արտասահմանյան մասնաճյուղերից ապրանքների որոշ բաղադրիչներ ներմուծում են համաշխարհային գներից ավելի ցածր գներով:

ՎԱԿ-ի համար հատկանշական են տեխնոլոգիաների նշանակության մեծացումը փոքր և միջին ձեռնարկատիրության հետ մրցակցային պայքարում: Վերջին տարիներին տեխնոլոգիաների համար ձեռնարկությունների կատարած ծախսերը զգալիորեն ավելացել են, որը արտահայտվում է արտասահմանյան մասնաճյուղերի բարձր տեխնոլոգիական կապիտալի արտահանման, տեխնոլոգիաների գնման, անձնակազմի ուսուցման, ինչպես նաև ռոյալթիի և լիցենզիաների վճարման ծախսերի մեծացմամբ: Տեխնոլոգիաների վրա ծախսվող գումարների մեծացումը կապված է այն հանգամանքի հետ, որ ՎԱԿ-ն ավելի ու ավելի են ներքաշվում տեխնոլոգիապես ինտենսիվ արտադրությունների մեջ, որը հնարավորություն է տալիս պահպանել և բարելավել իրենց մրցակցային առավելությունները շուկայում: Ինչպես գիտենք, արտասահմանյան շուկաներում ՎԱԿ-ի հաջող առաջխաղացման հիմքը դրանց մրցակցային առավելություններն են, որոնցից կարևորն է տեխնոլոգիական առաջատարությունը: Մրա հետ կապված՝ ՎԱԿ-ի ազդեցությունը ԳՏԱ-ի վրա համաշխարհային մասշտաբով շատ մեծ է. ՎԱԿ-ը որոշում են դրա զարգացման ուղիությունները և համապատասխանաբար համաշխարհային տնտեսության կառուցվածքային փոփոխությունները:

ՎԱԿ-ի համար աստիճանաբար ավելի մեծ դեր են սկսում խաղալ նորարարությունները և գիտահետազոտական աշխատանքները: Խոշոր ՎԱԿ-ի նորարարական ազդեցությունը համաաշխարհային տնտեսության վրա շատ մեծ է՝ կապված դրանց ֆինանսական հսկայական կարողությունների հետ: Ներկայումս շատ փոքր և միջին ձեռնարկություններ նկատելի ներդրում ունեն նորամուծությունների ստեղծման գործում, բայց հայտնագործության արդյունաբերական յուրացման համար անհրաժեշտ են սարքավորումների և արդյունաբերական գործընթացների, վաճառքի կազմակերպման, ներառյալ գովազդի ծախսերը, արդիականացման այնպիսի ծախսեր, որոնց համար դրանք միջոցներ չունեն: Այդ իսկ պատճառով ՎԱԿ-ը ոչ միայն իրենք են ստեղծում տեխնիկական նորություններ, այլև գնում են հայտնագործությունները փոքր ֆիրմաներից, որպեսզի հասցնեն դրանք զանգվածային արտադրության՝ այս դեպքում հանդես գալով որպես նորամուծությունների ակտիվ օգտագործողներ: ՎԱԿ-ը հանդես են գալիս ոչ միայն որպես նորարարությունների օգտագործողներ, այլև վաճառողներ:

Այսօր ՎԱԿ-ի լաբորատորիաներում և գիտական կենտրոններում են իրականացնում գիտական հետազոտությունների ու մշակումների հիմնական մասը: Նորարարական գործունեությունը որոշ աստիճանով որոշում է մրցունակությունը գլոբալ շուկաների համար մղվող պայքարում: Ընդ որում, նորարարական արտադրանքը պարտադիր չէ, որ ստեղծվի ՎԱԿ-ի հիմնադիր երկրում, ինչպես նախկինում էր, երբ դրանք մշակվում էին գլխամասային ընկերությունում, իսկ հետո փոխանցվում էին արտասահմանյան մասնաճյուղերին: ՎԱԿ-ի կողմից հետազոտական կենտրոններ ստեղծվում են շատ երկրներում, որտեղ դրա համար կան որակավորում ունեցող կադրեր և այլ անհրաժեշտ պայմաններ: Այսպես «IBM»-ը 90-ականների վերջին ԱՄՆ-ի սահմաններից դուրս ուներ մոտ 25 հազ. աշխատող, շուրջ 30 լաբորատորիա, որոնք գիտահետազոտական և փորձնակոնստրուկտորական աշխատանքներն իրա-

կանացնում էին կորպորացիայի միասնական ծրագրի շրջանակներում՝ հաշվի առնելով ՎԱԿ-ի մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների մասնագիտացման շուկաների առանձնահատկությունները: ՎԱԿ-ի կողմից առաջափոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման մեջ մեծ դեր ունի համագործակցությունը ինստիտուտների և գիտական կենտրոնների հետ: Ընդհանուր առմամբ ստեղծվել են այդպիսի ավելի քան 100 կենտրոններ, այդ թվում այնպիսի ընկերությունների կողմից, ինչպիսիք են՝ «Microsoft», «Motorola», «GM», «GE», «JVS», «Samsung», «IBM», «Intel», «Du Pont», «Ericsson», «Nokia», «Panasonic», «Mitsubishi», «AT&T» և այլն: Այլ կերպ ասած՝ ՎԱԿ-ը օգտագործում են այլ երկրների ազգային կադրերին իրենց մրցակցային առավելությունների մեծացման համար: Քանի որ ՎԱԿ-ի ավելի քան 85%-ը հիմնադրվել է ԱՄՆ-ում, Ճապոնիայում և ԵՄ-ում, այդ երկրները միավորում են փաստացիորեն բոլոր հիմնական գիտական մշակումները, որի պատճառով այդ երկրների տնտեսությունները ավելի շատ են կողմնորոշվում դեպի մտավոր սեփականության ապրանքների արտադրություն [9, 42-47]:

*Այսպիսով, XXI դարի ՎԱԿ-ը բարդ սոցիալ-տնտեսական համակարգեր են: Դրանք միավորում են ֆինանսական, արտադրական, գիտատեխնիկական ռեսուրսներ, ներառում են ծառայությունների և կառավարման տարրեր կառուցվածքներ, որոնց շնորհիվ որպես գերիշխող սուբյեկտներ ակտիվ գործունեություն են ծավալում համաշխարհային տնտեսության մեջ: ՎԱԿ-ը միասնական գեոտնտեսական միջավայրի նախաստեղծողներն են:*

*Առանցքային հասկացություններ. համաշխարհային տնտեսություն, գլոբալացում, վերազգայնացում, վերազգային կորպորացիա, տեխնոլոգիաների փոխանցում, մրցակցային առավելություններ:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ленский Е.В., Цветков В.А.* Транснациональные финансово-промышленные группы и межгосударственная экономическая интеграция: реальность и перспективы. АФП Еженедельника, Экономика и жизнь», 1998, 296 стр.
2. Овчинников Г.П. Международная экономика: учебное пособие. М. 1998, 620 стр.
3. <http://perspective.usherbrooke.ca/bilan/servlet/BMDictionnaire?iddictionnaire=1686> կանադացի տնտեսագետների վերլուծություն: Վերջին մուտքի ամսաթիվ՝ 23.09.2012թ.
4. Le Petit Robert Poche. Rédaction dirigée par Alain Rey, Paris, 1993, pp. 2400 – Ֆրանսերեն բացատրական բառարան:
5. *Le Capitalisme Mondial*, Charles-Albert Michacal, Presses Universitaires de France, coll. Quadrige, Paris, pp. 233.
6. R. ALAN HEDLEY, *Transnational Corporations and their regulation: Issues and Strategies*, 1999, pp. 500.
7. *World Investment Report by UNCTAD*, 2010, pp. 250.
8. Е.Ф.Авдокушин “Международные экономические отношения”, Москва 2001г., 168 стр.
9. Ф. Губайдуллина, Прямые иностранные инвестиции, деятельность ТНК и глобализация, МЭиМО, 2003, №2,42.-47 стр.

### **J. TADEVOSYAN, H. YERITSYAN INTERPRETATION OVER THE CONCEPT OF “TRANSNATIONAL CORPORATIONS”**

Transnational corporations of XXI century are complex social and economical systems, which are including various structures of financial, industrial, scientific, technical, management and services spheres. The activity of these dynamic systems in the world economy, as dominant players, is characterized by a global scale. In XX century transnational corporations are still creating



conditions on the planet to become the onegeoeconomical fundament. So, for transnational corporations we find convenient to give the following definition: " Transnational corporations are organizations, which realize their activities at least in two countries outside of the resident state, include various units, regardless of the organizational form and the sphere. The parent company controls the main part of capital and assets of all units, decisions are based on the general strategy, within their activity they are using the dinamic tendency of the international division of labor and the transnatinalization processes of the global economy, thereby contributing for the formation of the new value system in he world".

**Key concepts:** *world economy, globalization, transnationalization, transnational corporation, technology transfer, competitive advantage.*

### **ДЖ. ТАДЕВОСЯН, О. ЕРИЦЯН ИНТЕРПРЕТАЦИЯ ВОКРУГ ПОНЯТИЯ “ТРАНСНАЦИОНАЛЬНЫХ КОРПОРАЦИЙ”**

ТНК XXI века сложные социальные и экономические системы, которые сочетают в себе различные финансовые, промышленные, научно-технические, управленческие структуры, а так же сферу услуг. Активная деятельность этих систем в мировой экономике как доминирующих субъектов, характеризуется глобальным масштабом. ТНК еще в XX веке создали на планете предпосылки, чтобы быть единым геэкономическим фундаментом. Для понятия ТНК мы предлагаем следующее определение: "ТНК это организации, которые осуществляют свою деятельность по крайней мере в двух странах за пределами национального государства, включают в себя различные единицы, независимо от организационно-правовой формы и сферы деятельности, материнская компания контролирует значимую часть

капитала и активов всех единиц, решения принимаются на базе общей разработанной стратегии, в рамках своей деятельности активно используют объективные тенденции углубления международного разделения труда и процессы интернационализации мировой экономики, таким образом способствуя установлению новых мировых ценностей".

**Ключевые понятия:** *мировая экономика, глобализация, транснационализация, транснационализация, транснациональная корпорация, трансфер технологии, конкурентные преимущества.*


## ԲԱՆԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆԻՉ

### Ա. Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանկերը այնպիսի տնտեսական կառույցներ են, որոնց հիմնական գործունեությունը ազատ դրամական միջոցների հավաքագրումն է, վարկերի տրամադրումը, դրամական հաշվարկների կատարումը, թղթադրամների և տարբեր արժեթղթերի թողարկումը:

«Բանկ» տերմինը ծագել է իտալերեն «banca» բառից, որը նշանակում է դրամական սեղան, դրամափողի նստարան: «Բանկ» և «Բանկային գործ» հասկացություններն իրենց լիարժեք դրսևորումն են ստանում տնտեսավարման շուկայական մեթոդների պայմաններում, որին բնորոշ են սեփականության տարբեր ձևերի, ֆինանսական շուկայի բազմազան կառույցների, և ընդհանուր առմամբ կայացած ֆինանսական շուկայի, տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնության և պատասխանատվության սկզբունքների, կառավարման ապակենտրոնացված համակարգի և շուկայական տնտեսությանը բնորոշ այլ գործոնների առկայությունը:

Վերջին տարիներին հայաստանյան բանկային համակարգը կրել է լուրջ փոփոխություններ: 2011 թվականին Հայաստանի ֆինանսական համակարգը բավականին ակտիվ գործունեություն է ծավալել: Հայաստանի ֆինանսական համակարգի խոշոր մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի 91.1%-ը:



<http://www.cba.am/am/SitePages/Default.aspx>

Բանկերի տնտեսական դերը հասարակական պահանջ-մունքների բավարարման գործում բավականին մեծ է: Շնորհիվ բանկի ճկուն գործունեության՝ դրամական միջոցները վերաբաշխվում են տնտեսության տարբեր ոլորտների ու արտադրությունների միջև:

Հայաստանը հիմնականում մանր և միջին բանկերի երկիր է: Խիստ սահմանափակ ժամանակամիջոցում առևտրային բանկերը Հայաստանում վերարտադրեցին բազմազան բանկային, ֆինանսական և այլ ինստիտուտներ, որոնք գոյություն ունեին այլ երկրներում:

Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերը իրականացնում են ամենատարբեր գործառնություններ, որոնց թվում բանկային գործառնություններ, որոնք կազմում են առևտրային բանկի գործունեության անմիջական առարկան, գործարքներ, որոնք ունեն օժանդակ նշանակություն և ծառայում են բանկի աշխատանքի կազմակերպչական և նյութական նախադրյալների ապահովմանը:

Հայաստանում առևտրային բարեփոխումների իրականացման ընթացքում ստեղծվեց շուկայական ուղղվածության բանկային սիստեմ, որի օրենսդրական և իրավական կարգավորումները բխում են շուկայական տեսակի բանկային սիս-

տեմներից ունեցած միջազգային պահանջներից: Դրա հետ մեկտեղ հայկական բանկային սիստեմը իր տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման աստիճանով դեռ հետ է մնում աշխարհի առավել զարգացած երկրների բանկային սիստեմներից, ինչն արտահայտվում է նրա ոչ լիակատար բազմակողմանի կառուցվածքի, օրենսդրական և իրավական բազաների թերիություն և առանձին բանկերի թուլության մեջ:

Այնումենայնիվ, Հայաստանի տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները ենթադրում են էական առաջխաղացում տնտեսական կառավարման սուբյեկտների՝ ձեռնարկությունների, կազմակերպությունների և այլ բանկերի հետ փոխհարաբերություններում: Բանկերը, որպես կոմերցիոն կազմակերպություններ, որոնց հիմնական գործողություններն են վարկավորումը, ավանդները, կանխիկի տրամադրումը և այլն, դրանց իրականացման ընթացքում տարբեր տեսակի ռիսկերի են դիմում, ինչպես օրինակ տրամադրած վարկը չվերադարձնելը, վարկի տոկոսները չվճարելը, հաշվարկային ռիսկեր և այլն: Բանկային գործողությունների վտանգի աստիճանը կախված է բանկի հաճախորդների գործունեությունից:

Հայաստանի հանրապետության առևտրային բանկերի համար վարկավորումը հանդիսանում է ամենաեկամտաբեր գործողություններից մեկը, բայց դրա հետ մեկտեղ՝ մեծ ռիսկներ կայացնողը: Դա պարտավորեցնում է բանկերին հսկողություն սահմանել վարկավորման հաստատված սկզբունքների վրա, ինչպես նաև վարկառուների կողմից վարկի նպատակային օգտագործման վրա՝ հաշվի առնելով, որ վարկավորման գործընթացի ժամանակ բանկերը ակտիվ ազդեցություն են ունենում վարկառուների տնտեսական և ֆինանսական գործունեության վրա:

Բոլոր հիմնական բանկային գործառնությունները բաժանվում են չորս խմբերի. **պասսիվային գործառնություններին** են (առաջին խումբ) վերաբերվում ավանդների ընդունման, ինչպես նաև փոխառությունների թողարկման բոլոր տեսակի գործառնությունները:

**Ակտիվային գործառնություններին** (երկրորդ խումբ) վերաբերվում են բոլոր այն գործարքները, որոնք հաճախորդի համար ապահովում են անհրաժեշտ միջոցներ ստանալու հնարավորություն:

**Վճարումներին նպաստելու գործառնություններին** (երրորդ խումբ) վերաբերվում են այն գործառնությունները, ըստ որոնց բանկը իր վրա է վերցնում հաճախորդի գանազան վճարային պարտավորությունները, ինչպիսիք են՝ չեկերի վճարումները, դրամային փոխանցումների իրականացումը, վճարումների ընդունումը ըստ մուրհակների, պարտատոմսերի և այլ փաստաթղթերի:

**Այլ գործառնություններին** (չորրորդ խումբ) վերաբերվում են օրինակ, արժութային և ֆոնդային արժեքների գնումը և վաճառքը, բաժնետոմսերի և փոխառության տոմսերի տեղաբաշխմանը նպաստելը, արժեթղթերի ընդունումը և պահպանումը:

Շուկայում բանկերի գործունեության հաջողությունը շատ բանով կանխորոշվում է հաճախորդների՝ ձեռնարկատերերի, ընկերությունների և ֆիրմաների, առանձին անձանց հետ նրանց փոխհարաբերությունների բնույթով: Այդ հարաբերությունները ծագում են իրացված արտադրանքի դիմաց կամ մատուցված ծառայության համար հասույթի ստացման, բանվորների և ծառայողների աշխատավարձի վճարման համար կանխիկ դրամի ստացման, կարճաժամկետ վարկերի տրամադրման և մարման, անկանխիկ դրամական հաշվարկների իրականացման, երկարաժամկետ վարկերի մարման, (Աբգարյան Կ. Առևտրային բանկերի էությունն ու գործառնությունները, Երևան 2006, էջ 19-20) կապիտալ շինարարության ֆինանսավորման համար բյուջետային միջոցների ստացման, նրանց ճիշտ, նպատակային և ռացիոնալ ծախսման նկատմամբ վերահսկողության իրականացման գործընթացի ժամանակ:

Վարկավորման բնագավառում հարաբերությունները կառուցվում են հաստատված սիստեմով: Բանկային վարկավորման սիստեմն ասելով՝ պետք է հասկանալ փոխկապակց-

ված տարրերի ընդհանրությունը, որոնցից կախված է վարկային գործընթացի կազմակերպումը և կարգավորումը՝ ըստ վարկավորման սկզբունքների և ռիսկի:

Վարկավորման սիստեմը հիմնված է 3 կետերի վրա. 1. վարկի սուբյեկտներ, 2. վարկի ապահովում, 3. վարկավորման օբյեկտներ: Այս երեք տարրերը պահպանում են իրենց հիմնական իմաստը, հանդիսանում են վարկային գործողության «դեմքը», նրա ապահովությունը:

Վարկավորման սիստեմի հիմնական տարրերը անքակտելի են: Վարկավորման հարցում բանկի հաջողությունը կախված է այս երեք տարրերի՝ իրար լրացնելու կարողությունից: Մյուս կողմից, նրանց միությունը քանդելու փորձը խախտում է ամբողջ սիստեմը:

Բանկերը, հանդիսանալով առևտրային ձեռնարկություններ, առևտրային բնույթ են հաղորդում նաև վարկավորման գործողությունների ամբողջ սիստեմին: Նախ և առաջ, ելնելով բանկային տնտեսության եկամտաբերությունից՝ վարկերը վճարովի են: Սակայն հարցը միայն դա չէ: Բանկերը, որպես առևտրային ձեռնարկություններ, առևտուր են անում նախ և առաջ իրենց ռեսուրսներով՝ դնելով դրանք վարկային շրջանառության մեջ: Հենց այդ պատճառով բանկերի սովորական տնտեսության մեջ վարկային գործունեության եկամուտը համարվում է հիմնականը: Ամերիկյան բանկերի եկամտի ճնշող մեծամասնությունը հանդիսանում է վարկավորումը՝ ավելի քան 60%:

Բանկի վարկային արտադրանքի չափսը կախված է ոչ միայն բանկի հնարավորություններից, այլև ներգրավված ռեսուրսներից: Ժամանակակից շուկայական համակարգի մեջ մեծ չափերի առևտուր անել հնարավոր է միայն այն դեպքում, երբ բանկը լրացուցիչ ներգրավել է հաճախորդների միջոցները: Քանի որ բանկը ներգրավում է ռեսուրսներ ոչ թե իր, այլ հաճախորդների համար, ստացվում է, որ վարկային արտադրանքի ծավալը այնքան մեծ է լինում, որքան շատ է վերա-

դարձնելու պայմանով կուտակված ֆինանսական միջոցների ծավալը:

Ժամանակակից վարկային սիստեմի առանձնահատկությունը կայանում է ոչ միայն սեփական և ներգրավված ռեսուրսներից կախվածությունից, այլև որոշակի նորմերից, որոնք սահմանում է Կենտրոնական բանկը հաճախորդների վարկավորում կատարող կոմերցիոն բանկերի համար: Հաստատանի Հանրապետության Կենտրոնական բանկը կարգավորում է պարտադիր նվազեցումների տոկոսադրույքը կենտրոնացված պահեստներում: Գոյություն ունեն մասն ալ չափանիշներ, այդ թվում մինիմալ փողային պահուստի տեսքով, որոնք ստեղծվում են կոմերցիոն բանկում, հատկապես խոշոր վարկերի ծավալի կարգավորման ձևով, երբ բանկի պարտավորությունները համեմատվում են իրացվող միջոցների չափսերի հետ:

Շուկայի ուսումնասիրության ասպարեզում աշխարհում խոշորագույն հետազոտական ընկերություններից մեկի՝ GfK Group-ի կողմից արդեն յոթ տարի շարունակ իրականացվում է «Anholt-GfK Roper Nation Brands Index» համաշխարհային վարկանիշային ուսումնասիրությունը, որի նախաձեռնողն անգլիացի գիտնական Սայմոն Անհոլթն է<sup>4</sup>: Վերջինս «ազգային բրենդ» եզրույթի հեղինակն է և ազգային բրենդինգի մեթոդաբանության առաջին մշակողը [4]: Այսօր Անհոլթը նաև այս ոլորտում միակ մասնագիտական ակադեմիական ամսագրի (Place Branding and Public Diplomacy) գլխավոր խմբագիրն է:

Անհոլթի NBI – Nation Brands Index (Ազգային բրենդերի ինդեքս) վարկանիշային գնահատման համակարգի օգնությամբ ամեն տարի ուսումնասիրություններ են անցկացվում աշխարհի 50 զարգացած և զարգացող պետություններում՝ փորձելով գնահատել դրանց միջազգային հեղինակությունը և որոշել ազգային բրենդի վարկանիշը: Հետազոտական գլխավոր գործիքն on-line եղանակով սոցիոլոգիական հարցումներն են, որոնց մասնակցում են աշխարհի առավել շատ ճանապարհորդող 20 ազգությունների ավելի քան քսան հազար չափահաս ներկայացուցիչներ<sup>5</sup>:

Հարցման մասնակիցներին առաջարկվում է երկիրը գնահատել հետևյալ չափանիշներով.

- Արտահանում (բացահայտվում է երկրում արտադրվող ապրանքների և ծառայությունների հանդեպ ձևավորված պատկերացումը, ինչպես նաև որոշվում է այդ երկրի արտադրանքը ձեռք բերելու

---

<sup>4</sup> Simon Anholt

<sup>5</sup> GfK Group-ի NBI-փորձագետները զուգահեռում են, որ զբոսաշրջիկների կողմից երկրի ընկալումը կարող է չհամընկնել այդ երկրում քիզնեսի, առևտրի, դիվանագիտական և մշակութային կապերի զարգացման և անգամ զբոսաշրջության ոլորտում իրականացվող քաղաքականության իրական պատկերի հետ:

կամ դրանից խուսափելու միտումների տոկոսային հարաբերակցությունը):

- Իշխանություն (պարզվում է հասարակական կարծիքը երկրի իշխանությունների օրինակաչության և իրազեկության մասին, չափվում է անհատի վստահության աստիճանն իշխանությունների վարած քաղաքականության հանդեպ՝ մասնավորապես ժողովրդավարության, արդարադատության, շրջակա միջավայրի և աղքատության հաղթահարման բնագավառներում):
- Մշակույթ և ժառանգություն (բացահայտվում է երկրի պատմամշակութային ժառանգության ընկալման բնույթը և տրվում է սպորտի զարգացման և ժամանակակից մշակույթի՝ կինոարվեստի, երաժշտության, գեղարվեստի, գրականության գնահատականը):
- Մարդիկ (պարզվում է միջազգային կարծիքը երկրի բնակչության կրթական մակարդակի, աշխատուժի որակավորման, հասարակության այլ որակների մասին, ինչպես նաև երկրի այցելուների նկատմամբ բնակչության հյուրընկալության կամ թշնամանքի հնարավոր աստիճանի վերաբերյալ):
- Զբոսաշրջություն (գնահատվում է բնական և մշակութային տեսարժան վայրերի գրավչությունը և երկրի նկատմամբ առկա զբոսաշրջային հետաքրքրության աստիճանը):
- Ներդրումներ և ներգաղթ (որոշվում է երկրում բնակչության, ուսման, աշխատանքի նպատակով մարդկանց գրավելու կարողությունը, գնահատվում է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը):

Ուսումնասիրվող 50 երկրները ներկայացնում են աշխարհի վեց տարածաշրջան՝ Հյուսիսային Ամերիկա, Արևմտյան Եվրոպա, Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, Ասիա և Օվկիանիա, Հարավային Ամերիկա, Մերձավոր Արևելք և Աֆ-

րիկա: Հայաստանը երբևիցե չի ընդգրկվել ուսումնասիրվող երկրների ցանկում, թեև, ուսումնասիրության պայմանների համաձայն, ամեն տարի յուրաքանչյուր տարածաշրջանի երկրների ցուցակը կարող է համալրվել մինչև վեց նոր անվանումով: Դա կարող է տեղի ունենալ ընդգրկվելու ցանկություն ունեցող երկրի դիմումի հիման վրա կամ NBI-փորձագետների հատուկ որոշմամբ (եթե, օրինակ, երկիրը աչքի է ընկել աշխարհի համար հետաքրքրություն ներկայացնող ինչ-որ նոր դրսևորումով): Պետք է կարծել, որ առ այսօր ո՛չ Հայաստանն է հերթական անգամ ցածր վարկանիշ ստանալու ցանկություն հայտնել, ո՛չ էլ NBI-փորձագետներն են մեր երկրով բավականաչափ հետաքրքրված եղել:

Ինչևէ, ներկայացնենք NBI վարկանիշային ուսումնասիրության արդյունքներով ազգային բրենդերի վերջին երկու տարիների լավագույն տասնյակները (տե՛ս՝ Աղյուսակ 2) [5].

**Աղյուսակ 2. Ազգային բրենդների 2011-2012թթ. լավագույն տասնյակը ըստ NBI փորձագետների**

	2011թ.	2012թ.
1	ԱՄՆ	ԱՄՆ
2	Գերմանիա	Գերմանիա
3	Մեծ Բրիտանիա	Ֆրանսիա
4	Ֆրանսիա	Մեծ Բրիտանիա
5	Ճապոնիա	Ճապոնիա
6	Կանադա	Կանադա
7	Իտալիա	Իտալիա
8	Ավստրալիա	Շվեյցարիա
9	Շվեյցարիա	Ավստրալիա
10	Շվեդիա	Շվեդիա

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, վերջին երկու տարիների ընթացքում լավագույն տասնյակը համալրող երկրները մնացել են անփոփոխ, և միայն տասնյակի ներսում Մեծ Բրիտանիան և Ավստրալիան մեկական կետով բարելավել են իրենց դիրքերը՝ զբաղեցնելով համապատասխանաբար Ֆրանսիայի և Շվեյցարիայի տեղերը:

Ինչ վերաբերում է աշխարհի առաջատար ԱՄՆ-ին, ապա վերջինիս դիրքը կարելի է երկկերպ մեկնաբանել: Անշուշտ, համաշխարհային տնտեսական ճգնաժամն զգալիորեն ազդեց և շարունակում է ազդել ԱՄՆ-ի տնտեսության վրա. դեռ անցյալ տարի սնանկության շեմին կանգնած այդ վիթխարի տնտեսությունը լուրջ ֆինանսական և սոցիալական ցնցումներ ապրեց: Կասկած են հարուցում նաև վերջին երկու տարիների ընթացքում ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականության հաջողությունները (կարծում ենք՝ բավարար կլինի հիշեցնել ՆԱՏՕ-ի շրջանակներում իրականացրած հյուսիսաֆրիկյան «փայլուն» գործողությունները և դրանց այսօրվա հետևանքները կամ Իրանի նկատմամբ դրսևորվող թշնամական վերաբերմունքը): Սակայն այս ամենը ոչ մի կերպ չանդրադարձավ NBI վարկանիշային ուսումնասիրության արդյունքների վրա: Մի կողմից՝ դա հաստատում է NBI-փորձագետների զգուշացումն այն մասին, որ օտարերկրացի սովորական զբոսաշրջիկի աչքից հաճախ վրիպում է երկրում տիրող ռեալ իրավիճակը, իսկ գլոբալ աշխարհաքաղաքական երևույթներին և զարգացումներին ճիշտ արձագանքելը նրանից ժամանակ և ընկալում է պահանջում: Մյուս կողմից՝ կարելի է ասել, որ տասնամյակների ընթացքում ձեռք բերված և համաշխարհային հանրության գիտակցության մեջ կարծրատիպի նշանակություն ստացած հեղինակությունը կարող է դեռ երկար ժամանակ ԱՄՆ-ին բարձր վարկանիշներ ապահովել: Եվ, վերջապես, պետք է նաև հաշվի առնել ԱՄՆ-ում վաղուց ի վեր կայացած հանրային կառուցվածքն ու հիմնարար այն արժեքները, որոնք անընդհատ ամրապնդվում են հզոր պետական գաղափարախոսությամբ և, անկասկած, ապահովում են հասարա-



կական հիմքերի անասանությունն ու կյանքի անխափան ընթացքը նույնիսկ երկրի առաջ ծառացած ամենալուրջ խնդիրների առկայության պարագայում: Այդ է պատճառը, որ այցելուներն իրենց վրա չեն զգում երկրի ներսում առկա դժվարությունները և հարցումների ժամանակ ամենաբարձր գնահատականներն են շնորհում երկրին:

Ազգային բրենդինգի բնագավառում մասնագիտացած ևս մի հեղինակավոր կազմակերպություն՝ Future Brand միջազգային գովազդային գործակալությունը [6], որի հենակետային մասնաճյուղերը գտնվում են Լոնդոնում, Նյու-Յորքում և Սինգապուրում, իսկ տարածաշրջանային գրասենյակները սփռված են աշխարհով մեկ, ամեն տարի հրապարակում է երկրների «Country Brand Index» (CBI) ուսումնասիրության արդյունքներով կազմվող վարկանիշային ցուցակը: 2011-2012թթ. CBI մրցույթին մասնակցել է 113 երկիր (Հայաստանը չի ընդգրկվել այդ ցուցակում), որոնց վարկանիշները որոշվել են տարբեր պետությունների շուրջ 3500 մշտապես ճանապարհորդող քաղաքացիների և 102 փորձագետների հարցման արդյունքում<sup>6</sup>: Սոցիոլոգիական ուսումնասիրության նպատակն է երկրների ոչ նյութական ակտիվների գնահատումը հինգ հիմնական կատեգորիաներով՝ կյանքի որակ, զբոսաշրջային գրավչություն, արժեքային համակարգ, քաղաքական կայունություն և տնտեսական իրավիճակ:

Ինչպես և 2010թ. հարցման արդյունքում, այնպես էլ այս անգամ CBI վարկածով աշխարհի լավագույն ազգային բրենդ է ճանաչվել Կանադան: Բնավ չփորձելով նվազեցնել Կանադայի արժանիքները՝ նկատենք, որ այսպիսի բարձր գնահատականը թերևս կարող է բացատրվել նաև արտաքին, այսպես ասած «իրադարձային» գործոնով. վերջին տարիներին այս երկրի նկատմամբ համաշխարհային հանրության մեծ ուշա-

---

<sup>6</sup> Այս անգամ հարցման մասնակիցներ են եղել Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Չինաստանի, Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի, Ճապոնիայի, Բրազիլիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության և Ավստրալիայի քաղաքացիները:

դրությունը պայմանավորված է եղել 2010թ. Վանքովերում անցկացված Օլիմպիական խաղերով, ինչպես նաև 2011-ին Մեծ Բրիտանիայի արքայազն Ուիլյամի և նրա նորաթուխ տիկին Զեյթի՝ Կանադա կատարած այցով: Այս երկու աղմկահարույց իրադարձությունները խթանեցին խոշոր զբոսաշրջային հոսքերի մուտքը երկիր՝ դրանով իսկ ազդելով ճանապարհորդների կողմից տրված գնահատականի վրա: Թեպետ Կանադայի հեղինակությունը, անկասկած, հիմնված է նաև երկրի կայուն ֆինանսաքաղաքական դրության և սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակի վրա:

CBI վարկանիշի 2011-2012թթ. լավագույն տասնյակի մնացած տեղերը բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս՝ Աղյուսակ 3) [7].

### Աղյուսակ 3. Ազգային բրենդերի 2011-2012թթ. լավագույն տասնյակն ըստ CBI վարկանիշի

1	Կանադա
2	Շվեյցարիա
3	Նոր Զելանդիա
4	Ճապոնիա (!!!) <sup>7</sup>
5	Ավստրալիա
6	ԱՄՆ
7	Շվեդիա
8	Ֆինլանդիա
9	Ֆրանսիա
10	Իտալիա

Future Brand գործակալությունն իրականացնում է նաև զբոսաշրջության ոլորտի թեմատիկ ուսումնասիրություն, որի 2011թ. արդյունքը հետևյալն է.

<sup>7</sup> Անգամ կործանիչ երկրաշարժերը, ցունամիները և Ֆուկուսիմայի ատոմային աղետը չեն ազդել Ճապոնիայի միջազգային հեղինակության վրա:

- Մշակութային զբոսաշրջության զարգացման առումով լավագույն երկրներն են՝ Իտալիան, Ֆրանսիան, Հնդկաստանը, Ճապոնիան և Հունաստանը:
- Ազգային ավանդույթների պահպանման առումով առաջատար են համարվում Ճապոնիան, Հնդկաստանը, Պերուն, Կամբոջան և Բութանը:
- Լողափնյա զբոսաշրջության լավագույն ուղղություններն են՝ Թահիթին, Բերմուդյան կղզիները, Արուբան, Բարբադոսը և Բահամյան կղզիները:
- Ընտանեկան հանգստի համար ամենահարմարավետ երկրներն են՝ Կանադան, Ավստրալիան, ԱՄՆ-ը, Նոր Զելանդիան և Պորտուգալիան:
- Գիշերային կյանքի լավագույն վայելքներն ապահովում են Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Բրազիլիան, ԱՄՆ-ը և Թաիլանդը:
- Ազգային խոհանոցի առումով զբոսաշրջիկների հետաքրքրությունն ուղղված է Ֆրանսիային, Իտալիային, Ճապոնիային, Արգենտինային և Սինգապուրին:
- Լավագույն բնաճանաչողական տուրերը կազմակերպվում են Կոստա-Ռիկայում, Թահիթիում, Կանադայում, Նոր Զելանդիայում և Ֆիջիում:
- Գնային առումով մատչելի են համարվում Հնդկաստանը, Մեքսիկան, Թաիլանդը, Վիետնամը և Բուրնդարիան:
- Զբոսաշրջության համար ամենաանվտանգ երկրներն են՝ Կանադան, Գերմանիան, Ճապոնիան (!!!), Նոր Զելանդիան և Բերմուդները:

CBI-փորձագետների կանխատեսումներով՝ մոտակա տարիներին համաշխարհային զբոսաշրջության առաջատարներ կդառնան Միավորված Արաբական Էմիրությունները, Չինաստանը և Վիետնամը, որոնց, ամենայն հավանականությամբ, կհաջորդեն բավական հուսադրող նախադրյալներ ունե-

ցող Խորվաթիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը և Հնդկաստանը:

Ելնելով երկրների բրենդների գնահատման վերը շարադրված մոտեցումներից՝ այժմ փորձենք պարզել, թե որն է մեր երկրի ռազմավարությունը սեփական իմիջի ձևավորման և ազգային բրենդի հզորացման հարցում:

Հայաստանն այն երկրներից է, ուր ազգային բրենդինգի իրականացումը և այս տեսակետից աշխարհի այլ երկրների հետ մրցակցային համեմատության մեջ մտնելը դեռևս նոր գործընթաց է: Սակայն Հայաստանի Հանրապետությունում արդեն կայացել է տարբեր արդյունաբերական ապրանքանիշերի ստեղծման գործընթացը: ՀՀ-ն իրավամբ կարող է համարվել վաղուց ի վեր ձևավորված և աշխարհում շատերին հայտնի մշակութային բրենդների երկիր<sup>8</sup>: Թեև ազգային բրենդինգը հատուկ մեթոդներով իրականացվող բավականին բարդ և երկարատև գործընթաց է, այնուամենայնիվ, պետության բրենդի ձևավորման վրա ազդում է նաև նրա տարածքում գործող ընկերությունների, կազմակերպությունների, արտադրվող ապրանքների և այլ ազգային երևույթների բրենդների գումարային արժեքը: Կարելի է ասել, որ ազգային բրենդի հզորության հիմքում նրա լիարժեք նույնացումն է երկրի ինքնության հետ, իսկ այդ ինքնության աղբյուրներն են բոլոր այն գաղափարները, արժեքները, կերպարները, էթնոմշակութային և լեզվական առանձնահատկությունները, պատմական և բնական ժառանգությունը, պետական քաղաքականությունը, ազգային ընկերությունները և ապրանքները, որոնք սպառողների թիրախային խմբերի գիտակցության մեջ կարող են առաջացնել եր-

---

<sup>8</sup> Չփոթենք ապրանքանիշը և բրենդը: Թեև այս հասկացությունները որոշակի նմանություն ունեն, սակայն դրանց միջև կա մի էական տարբերություն. ապրանքանիշը (կամ ապրանքային նշանը) իրավական կատեգորիա է, իսկ բրենդը ինչ-որ երևույթի, ապրանքի կամ նույնիսկ անձի կերպարի մտավոր, բարոյական բաղադրիչն է, որը ձևավորվում է մարդկանց գիտակցության մեջ որպես վերաբերմունք՝ ստանալով որոշակի զգացմունքային գունավորում:

կիր-բրենդի հետ կապված որոշակի զուգորդումներ և զգացմունքներ:

Այդ պատճառով ազգային բրենդի ստեղծման ալգորիթմը կարող է ներառել հետևյալ քայլերը.

- բրենդի հետ զուգորդվող արժեքների, բնութագրերի և հատկանիշների որոնում,
- բրենդի նույնականության հստակ սահմանում,
- բրենդի նույնականության փոխակերպում սպառողի համար տեսանելի և շոշափելի արժեքների ձևով (ծառայություններ, ապրանքներ և այլն),
- բրենդի նույնականությունը սպառողին հասցնող հարողակցության ապահովում:

Ուոլլի Օլինսը (Wally Olins)՝ այսօր աշխարհում բրենդինգի և երկրների իմիջի ձևավորման ամենաճանաչված մասնագետներից մեկը, իրավացիորեն նկատում է, որ ազգային բրենդի հիմքում պետք է ընկած լինի ինչ-որ առանցքային գաղափար, որը տարբերակում է երկիրը, արդյունավետ և գրավիչ կերպով ներկայացնում է ազգային բնութագրերը և համահունչ է հետևյալ չորս սկզբունքներին [8, 92].

1. Առանցքային գաղափարը պետք է գործի էմոցիոնալ և ռացիոնալ մակարդակներում, որպեսզի մարդկանց մոտ առաջացնի բրենդի և՛ զգացմունքային, և՛ բանական ընկալում:
2. Առանցքային գաղափարը պետք է ուղղված լինի սպառողների բոլոր թիրախային խմբերին:
3. Առանցքային գաղափարը պետք է լինի տարբերակիչ:
4. Առանցքային գաղափարը պետք է լինի ճշմարիտ և, խուսափելով կաղապարներից, պետք է ընդգծի այն հայեցակարգը, որը սպառողների կողմից իրատեսական և ոգեշնչող կճանաչվի:

Հայաստանի իշխանությունները, հոգալով երկրի ազգային բրենդի առանցքային գաղափարի ձևավորման մասին, պետք է նաև միասնական դիրքորոշում ունենան քաղաքա-

կան, սոցիալ-տնտեսական, իրավական, պետական գաղափարախոսության, սպորտի, մշակույթի, գիտության և ազգային բրենդի հետ կապված այլ հարցերում: Միայն այսպիսի համալիր մոտեցումը կնպաստի միջազգային շուկայում Հայաստանի Հանրապետության ճիշտ դիրքավորմանը, ինչպես նաև երկրի ներդրումային գրավչության բարձրացմանն ու զրոսաշրջության զարգացմանը:

Ազգային բրենդի ձևավորման անհրաժեշտությունն ավելի պատկերավոր ու խորությամբ գիտակցելու համար կարելի է պարզապես հիշել, թե ինչու են մարդիկ ձգտում ձեռք բերել գերմանական ավտոմեքենա, ճապոնական տեխնիկա, ֆրանսիական կամ իտալական նորաձև հագուստ, չեխական գարեջուր, շվեյցարական ժամացույց, խոշոր դրամական միջոցներն ի պահ հանձնելու նույն շվեյցարական բանկերին, կամ երկրպագելու ռուսական բալետի արտիստներին և այլն: Ուստի, Հայաստանի Հանրապետությունն էլ, լուծելով արտաքին աշխարհին ներկայանալու խնդիրը, առաջին հերթին պետք է հստակ որոշի, թե ինչով ենք մենք արդեն հայտնի և ինչով ենք ուզում լրացնել սեփական երկրի կերպարը:

Արտասահմանում Հայաստանը և հայերին շատերը ճանաչում են Յեղասպանության կապակցությամբ (հատկապես վերջին շրջանում համաշխարհային հանրության ուշադրությունը գրաված ֆրանսիական հայտնի նախագծի քննարկումների և թուրքական կողմի արձագանքի շնորհիվ): Ոմանք հիշում են 1988թ. ավերիչ երկրաշարժը: Հայաստանը հայտնի է նաև որպես հարևան Ադրբեջանի հետ երկարատև հակամարտության մեջ գտնվող երկիր: Համաշխարհային հանրության ավելի տեղեկացված և շատ ավելի փոքր զանգվածը լսել է առաջին քրիստոնյա երկրի մասին, ճանաչում է Շարլ Ազնավուրին և, գուցե, գիտե ևս մի քանի փաստ մշակութային շարքից, ինչպես օրինակ՝ դուդուկը կամ Արամ Խաչատրյանի երաժշտությունը: Ոգելից խմիչքների սիրահարները, հավանաբար, ծանոթ են հայկական կոնյակին: Մա է մեր երկրի կերպարի ամենահայտնի և ամենամակերեսային ուրվագիծը:

Այս համատեքստում չափազանց բարձր է գնահատվում քրիստոնեության 1700-ամյակին նվիրված 2001թ. Հայաստանում կազմակերպված միջոցառումների ողջ համալիրը, որն անկասկած դրականորեն ազդեց երկրի միջազգային վարկանիշի վրա և մեծապես նպաստեց Հայաստանի հանրահռչակմանն ու ներգնա զբոսաշրջության զարգացմանը:

Թիրախային խմբերի գիտակցության մեջ երկրի բրենդը ձևավորվում է մարդու ստացած տպավորությունների հիման վրա: Յուրաքանչյուր երկիր առաջին հերթին ներկայանում է իր պետական ատրիբուտներով (գինանշան, դրոշ, օրհներգ, ազգային խորհրդանիշներ), որոնց հետ մեկ տեղ մեծ նշանակություն է ձեռք բերել նաև երկրի կարգախոսը: Բերենք մի քանի երկրների հայտնի կարգախոսների օրինակներ.

- ԱՄՆ՝ «Ամերիկյան երազանք» (AMERICAN DREAM),
- Իտալիա՝ «Բաղցր կյանք» (DOLCE VITA),
- Գերմանիա՝ «Առաջընթաց տեխնոլոգիաների միջոցով» (VORSPRUNG DURCH TECHNIK),
- Թունիսիա՝ «Թունիս. Բարի արև բարի երկրի վերևում» (TUNISIA. GOOD SUN ABOVE THE GOOD COUNTRY),
- Շվեյցարիա՝ «Անձնական կյանքի գաղտնիության պահպանում» (KEEPING PRIVACY),
- Չինաստան՝ «Չարմանահրաշ Չինաստան. Ուղևորություն դեպի անցյալը և ապագան» (AMAZING CHINA. JOURNEY INTO THE PAST AND THE FUTURE),
- Ռուսաստանի Դաշնություն՝ «Ռուսաստանը՝ հնարավորությունների երկիր» (РОССИЯ – СТРАНА ВОЗМОЖНОСТЕЙ):

Այս ուղղությամբ Հայաստանը նույնպես լուրջ քայլեր է ձեռնարկել: 2006թ. սեպտեմբերից սկսած՝ ավելի քան երկու տարի անընդմեջ, հեղինակավոր CNN հեռուստաընկերության եթերից աշխարհով մեկ հեռարձակվում էին Հայաստանը գո-

վազող 30 և 60 վայրկյան տևողությամբ երկու հոլովակները, որոնք մեծ դեր խաղացին երկրի բրենդի ձևավորման և միջազգային հեղինակության բարձրացման գործում: Հոլովակներում առաջին անգամ հնչեց Հայաստանը՝ որպես զբոսաշրջային դեստինացիա ներկայացնող տպավորիչ կարգախոսը, այն է՝ «Armenia: Noah's Route, Your Route» (Հայաստան. Նոյի ուղին քո ուղին է): Նույն հոլովակների շնորհիվ ամրապնդվեց և միջազգային ճանաչում ստացավ նույն պատկերը՝ որպես Հայաստանը խորհրդանշող զբոսաշրջային լոգո:

Մեր երկրի իմիջի և ազգային բրենդի վրա ազդող այլ դրական գործոններից անհրաժեշտ է նշել նաև՝ 1) ավանդական դարձած Հայ մշակույթի օրերի կազմակերպումը տարբեր երկրներում (վերջին մի քանի տարիների ընթացքում այս կարգի միջոցառումներ են անցկացվել Ֆրանսիայում, Իտալիայում, Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններում, Գերմանիայում, Ուկրաինայում, Չինաստանում, Սիրիայում, Քուվեյթում, 2012թ. աշնանը Հայ մշակույթի օրերը կանցնեն նաև Լիբանանում). 2) Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում դուրուկի և հայկական խաչքարի արվեստի ընդգրկումը. 3) «Ձվարթնոց» միջազգային օդանավակայանում իրականացված փոփոխությունները (զբոսաշրջիկը երկրի մասին իր առաջին տպավորությունը հենց օդանավակայանից է ստանում). 4) մայրաքաղաքի բարեկարգման հետ կապված աշխատանքները. 5) երկրի մի շարք զբոսաշրջային տարածաշրջանների (Ծաղկաձոր, Գիլիջան, Տաթև, Ջերմուկ) զարգացմանն ուղղված պետական ռազմավարական ծրագրերի իրագործումը և այլն:

Ցանկացած պետության վարկանիշը կապված է երկրում զբոսաշրջության զարգացման աստիճանի, անհրաժեշտ զբոսաշրջային ենթակառուցվածքների առկայության, զբոսաշրջիկների պահանջմունքների լիարժեք բավարարման հետ: Սակայն զբոսաշրջությունը իր հերթին անմիջական կախման մեջ է երկրի վարկանիշից. որքան բարձր է երկրի միջազգային հեղինակությունը, այդքան բարձր է նրա զբոսաշրջային գրավ-



չությունը և այցելուների թիվը: Ավելին. երկրի դրական իմիջն ուղղակիորեն անդրադառնում է այդ երկրում արտադրվող բոլոր ապրանքների սպառողական գրավչության և պահանջարկի վրա, որոնք էլ ապահովում են ազգային ընկերությունների մրցունակությունը արտաքին շուկայում: Այսինքն՝ երկրի տնտեսական զարգացման և ազգային բրենդի ձևավորման գործընթացները գտնվում են մշտական փոխներգործության մեջ:

Հայաստանի Հանրապետությունում պետական բրենդինգային քաղաքականության իրականացումն իր դրական ազդեցությունը կթողնի առաջին հերթին արտասահմանյան ներդրումների և զբոսաշրջության ոլորտի, ինչպես նաև Հայաստանում արտադրվող և արտահանվող ապրանքների ծավալի ավելացման վրա: Այս նպատակով ՀՀ որևէ պետական գերատեսչության կառուցվածքում (օրինակ՝ Էկոնոմիկայի նախարարության կազմում) կարևոր է ունենալ երկրի բրենդինգային քաղականությանը զբաղվող հատուկ մարմին, որը կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություն կմշակի՝ օգտագործելով ազգային մարքեթինգային քաղաքականության բոլոր գործիքները և համագործակցելով երկրի պետական, հասարակական և մասնավոր կառույցների հետ: Այսպիսի ռազմավարությունը պետք է ներառի նաև սպառողների և ներդրողների հետ անմիջական կապի մեթոդներ<sup>9</sup>, մասնավորապես՝

- 1) տարածքային բրենդինգ (Հայաստանի մարզերի և առանձին համայնքների պատմամշակութային, քնական, տնտեսական ռեսուրսային ներուժի ուսումնասիրություն, որի արդյունքներով կկազմվեն ամ-

---

<sup>9</sup> Խոսքը ժամանակակից PR-տեխնոլոգիաների մասին է: Մասնագիտական գրականության մեջ հաճախ այն կարծիքն է արտահայտվում, որ այսօր բրենդը ձևավորվում է ոչ այնքան գովազդի օգնությամբ, որքան հասարակության հետ կապերի միջոցով: Գովազդը ծառայում է արդեն ձևավորված բրենդի պահպանման նպատակին:

բողջ երկրի առաջընթացն ապահովող զարգացման ծրագրեր)։

- 2) կրթական ռեսուրսի օգտագործում.
- 3) հաղորդակցման տեղեկատվական տեխնոլոգիաներ (հատկապես համացանցի հնարավորությունների օգտագործում).
- 4) սոցիոլոգիական հարցումների անցկացում.
- 5) Հայաստանին նվիրված տարբեր լեզուներով գրքերի, բրոշյուրների, տեղեկատուների, զբոսաշրջիկների համար նախատեսված ուղեցույցների, ճանապարհային քարտեզների և այլ տեղեկատվական նյութերի հրատարակում և տարածում.
- 6) իրադարձային մարքեթինգի (event-marketing) բոլոր հնարավորությունների օգտագործում (երկրում կազմակերպվող միջոցառումներ՝ տոնակատարություններ, արվեստի փառատոններ, բնագավառային ցուցահանդեսներ, տոնավաճառներ, արդյունաբերական էքսպոներ և այլն), որը թույլ կտա ավելի հստակ նախանշել այն թիրախային խմբերը, որոնց ուշադրությունն անհրաժեշտ է գրավել դեպի Հայաստանի Հանրապետությունը, դեպի հայկական ազգային արժեքները։

Այս աշխատանքներում, անկասկած, պետք է ընդգրկվեն թե՛ արտասահմանյան հայտնի փորձագետները, հետազոտական և խորհրդատվական ընկերությունները, և թե՛ Հայաստանի առանձնահատկություններին քաջածանոթ տեղական մասնագետները։ Կարծում ենք՝ նման համագործակցությունը մեր երկրի ազգային բրենդի հզորացման և միջազգային հեղինակության բարձրացման գործընթացում նկատելի դրական արդյունքներ կապահովի։

***Առանցքային հասկացություններ.** իմիջի կառավարում, ազգային բրենդինգ, բրենդինգային քաղաքականություն, հեղինակության չափում, վարկանիշային գնահատման չափա-*

*նիշներ, դիրքավորում արտաքին շուկայում, սոցիոլոգիական հարցումներ, երկրի բրենդի առանցքային գաղափար:*

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. True, J. “Globalisation and Identity” // Globalisation and Identity / Raymond Miller (ed.) – South Melbourne: Oxford University Press, 2006.
2. “НОЕВ КОВЧЕГ” – независимая информационно-аналитическая международная армянская газета, № 6 (165) Март (16-31) 2011г. URL: <http://noev-kovcheg.ru/mag/2011-06/2481.html> (հարցման ամսաթիվը՝ 21. 02. 2012):
3. URL:<http://www.weforum.org/reports/global-competitiveness-report-2011-2012> (հարցման ամսաթիվը՝ 21. 02. 2012):
4. Anholt, S. Competitive Identity: The New Brand Management for Nations, Cities and Regions. Palgrave Macmillan, 2007. Pages: 160.
5. URL:<http://www.simonanholt.com/Research/research-the-anholt-gfk-roper-nation-brands-index-sm.aspx> (հարցման ամսաթիվը՝ 27. 02. 2012):
6. URL: <http://www.futurebrand.com> (հարցման ամսաթիվը՝ 01. 03. 2012):
7. URL:<http://www.futurebrand.com/think/reports-studies/cbi/2011/overview/> (հարցման ամսաթիվը՝ 01. 03. 2012):
8. Olins, W. The Brand Handbook. Thames & Hudson, London, 2008. Pages: 112.

**А. С. МАТЕНЦЯН**  
**ИМИДЖ СТРАНЫ И ОСОБЕННОСТИ**  
**НАЦИОНАЛЬНОГО БРЕНДИНГА**

**Резюме**

В статье представлено понятие национального брендинга, рассмотрены проблемы формирования и укрепления бренда страны, а также связи между понятием “имидж страны” и осуществлением национального брендинга. Представлен сравнительный анализ некоторых известных в мире систем рейтинговой оценки брендов государств, в том числе отраслевых систем, оценивающих туристскую привлекательность разных стран. Особое внимание в статье уделено проблеме укрепления национального бренда Армении, что послужит ее эффективному позиционированию на внешнем потребительском рынке и повышению мирового имиджа страны как туристского региона. Рассмотрены некоторые механизмы реализации национального брендинга Армении и предложен ряд необходимых мер по формированию ключевой идеи бренда страны и продвижению ее туристского имиджа.

***Ключевые понятия:** управление имиджем, национальный брендинг, брендинговая политика, измерение репутации, критерии рейтинговой оценки, позиционирование на внешнем рынке, социологические опросы, ключевая идея бренда страны.*

**A.S. MATENTSYAN**  
**COUNTRY IMAGE AND PECULIARITIES**  
**OF THE NATIONAL BRANDING**

**Summary**

The article presents the concept of the national branding and considers the problems of establishing and strengthening the country brand, as well as the links between the concept of the country image and the national branding realization. Besides, a comparative analysis of some world-known country brand rating systems is done, including special systems that evaluate touristic attractiveness of different countries. Particular attention is paid to strengthening the national brand of Armenia, which will contribute to its more effective positioning on the foreign consumer market and improve the global image of the country as a tourism region. Some mechanisms of the national branding in Armenia are also under the author's consideration. A number of essential tools for creating the key idea of the country brand and promoting the touristic image of the country is proposed in the article.

Key concepts: image management, national branding, branding policy, measurement of reputation, rating criteria, positioning on the foreign market, public opinion polls, the key idea of the country brand.

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՁԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Լ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Լ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Ժամանակակից զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության ամենախոշոր, արդյունավետ ու առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է: Բավական է նշել, որ զբոսաշրջությունը ծառայությունների վաճառքի գծով միջազգային ասպարեզում զբաղեցնում է առաջին տեղը [1, 43]: Պատմականորեն զբոսաշրջությունն առաջացել է Եվրոպայում: Այժմ էլ միջազգային զբոսաշրջության մեծ մասը բաժին է ընկնում Եվրոպային: Դրան նպաստում են թե՛ պատմական նախադրյալները և թե՛ սոցիալ-տնտեսական պայմանները: Վերջին տարիներին զբոսաշրջությունը զարգանում է այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Ասիան, Աֆրիկան, Միջին Արևելքի երկրները: Սակայն այցելությունների քանակով Եվրոպան շարունակում է պահպանել առաջատարի դիրքերը: 2011թ. Եվրոպա է այցելել 503 մլն զբոսաշրջիկ: Նախորդ տարվա համեմատ զբոսաշրջիկների թվաքանակն աճել է 5.4%-ով: Միջազգային զբոսաշրջային շուկայում Եվրոպայի մասնաբաժինը կազմել է 51%: Չբոսաշրջիկների այցելությունների ցուցանիշով երկրորդը Ասիան է՝ 216 մլն մարդ: Այստեղ նախորդ տարվա համեմատ զբոսաշրջիկների թվաքանակի աճը կազմել է 5.8%: Չբոսաշրջության ցուցանիշով հաջորդը Ամերիկան է՝ 156 մլն մարդ: 2011 թվականին Միջազգային զբոսաշրջային շուկայում Ասիայի մասնաբաժինը կազմել է 22%, իսկ Ամերիկայինը՝ 16%: Վերջին տարիներին այցելությունների բարձր ցուցանիշներ են գրանցվել նաև Միջին Արևելքի երկրներում: Մասնավորապես՝ 2011 թվականին այս տարածաշրջանում զբոսաշրջային այցելությունների թիվը հասել է 55 միլիոնի, թեև այս ցուցանիշը 8.3%-ով նվազել է նախորդ տարվա արդյունքների համեմատ [2, 9]:

Եվրոպան միջազգային զբոսաշրջությունից ստացված եկամուտներով նույնպես զբաղեցնում է առաջին տեղը (2011թ. շուրջ 433 մլրդ դոլար): Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 5.3%: Երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցնում են Ասիան (215 մլրդ ԱՄՆ դոլար) և Ամերիկան (173 մլրդ ԱՄՆ դոլար): Այս երկու տարածաշրջաններում էլ նախորդ տարվա համեմատ զբոսաշրջության աճ է նկատվել. Ասիայում՝ 5.9%, Ամերիկայում՝ 4.21%: Եկամուտների ստացման տեսանկյունից զբոսաշրջության մասնաբաժինը միջազգային շուկայում կազմել է 20% [3]:

Թեև միջազգային զբոսաշրջությունն անգամ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում համեմատաբար կայուն զարգացում արձանագրեց, սակայն ճգնաժամն առաջ բերեց բազմաթիվ հիմնախնդիրներ նաև այս ոլորտում, որոնք ավելի սրվեցին երկրների տնտեսական անկայունության, աշխարհում հաճախակի դարձած բնական աղետների, ինչպես նաև շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով: Այնուամենայնիվ, միջազգային զբոսաշրջությունը վերականգնվում էր սպասվածից ավելի արագ: 2010թ. զբոսաշրջության ոլորտի արագ վերականգնումն անշուշտ ամրապնդեց ոլորտի ճկունության և արագ կարգավորման վերաբերյալ շրջանառվող կարծիքը: Փորձը միաժամանակ ցույց տվեց, որ զբոսաշրջության ոլորտը վերականգնվում է շատ ավելի արագ, քան տնտեսության մյուս ճյուղերը (հարաբերությունը՝ 5/8): Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում Ասիան և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանն առաջինն էին, որտեղ 2009թ. ապահովվեց 13% աճ, որը շարունակվեց մինչև 2010թ.: Նույն թվականին Միջին Արևելքում նույնպես արձանագրվեց բարձր աճ (14%), սակայն համեմատաբար ավելի ցածր, քան 2009թ.: Ամերիկայում զբոսաշրջության վերականգնումն արագ էր ընթանում՝ 6% աճի շնորհիվ: 2009թ. Աֆրիկայում գրանցվեց զբոսաշրջության 7% աճ, որը շարունակվեց նաև 2010թ.՝ կապված Հարավաֆրիկյան Հանրապետությունում անցկացված ֆուտբոլի աշխարհի առաջնության (FIFA World Cup) հետ: Սակայն

Եվրոպայում, ի տարբերություն այլ տարածաշրջանների, նկատվեց ավելի ցածր աճ (3%): Պատճառներից մեկն այն էր, որ Եվրոպան մյուս տարածաշրջանների համեմատ ավելի էր տուժել՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի և այցելուների միջին թվաքանակի զգալի նվազման հետևանքով: Այս գործում բացասական դեր ունեցան նաև օդային տրանսպորտի տևական խափանումները, ինչպես նաև եվրոյի գոտու նկատմամբ աշխարհում առաջացած անվստահությունը:

2010թ. միջազգային զբոսաշրջիկների թվաքանակն ավելացավ 7%-ով, հասնելով 940 միլիոնի: Դրա շնորհիվ դրամական մուտքերն ավելացան 5%-ով՝ կազմելով 919 մլրդ ԱՄՆ դոլար: 2011թ. առաջին երկու ամիսներին միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը հասավ 124 միլիոնի, որը զգալիորեն գերազանցում էր 2010թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշը (119 մլն), ընդ որում՝ զարգացող տնտեսությամբ երկրներում աճն ավելի բարձր էր (6%), քան զարգացած երկրներում (4%) [4]:

2011թ. առաջին ամիսների ընթացքում միջազգային զբոսաշրջիկների այցելություններն ավելացան 5%-ով, ինչը վկայում է այն մասին, որ 2010 թվականին ապահովված աճը շարունակվել է նաև 2011-ին՝ կազմելով 7%: ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) տվյալների համաձայն՝ 2011թ. փետրվարին աշխարհի բոլոր տարածաշրջաններում նկատվել են դրական տեղաշարժեր (բացառությամբ Միջին Արևելքի): Աճի բարձր ցուցանիշներ են արձանագրել Հարավային Ամերիկան և Հարավային Ասիան (15%), որոնց հաջորդում են Հարավային Սահարայի երկրները (13%), Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները (12%):

Թեև Ասիայի խաղաօվկիանոսյան տարածաշրջանում 2010 թվականին ապահովված աճն աշխարհում արձանագրված ամենաբարձր ցուցանիշներից էր, սակայն 2011թ. այն կրճատվել էր 6%-ով: Սպասվածից ավելի բարձր էր Եվրոպայի ցուցանիշը (6%)՝ կապված Կենտրոնական և Արևելյան Եվրո-



պայում գրոսաշրջիկների ակտիվ շարժի, դեպի Հարավային և Միջերկրածովյան Եվրոպա գրոսաշրջիկների հոսքի ավելացման հետ, ինչն էլ իր հերթին պայմանավորեց Հյուսիսային Ամերիկայի և Միջին Արևելքի՝ վերը նշված ցուցանիշի անկումով՝ կազմելով համապատասխանաբար՝ 9 և 10 տոկոս:

Ամերիկայի տարածաշրջանում գրոսաշրջիկների թվաքանակի 5% աճը համապատասխանում էր համաշխարհային միջին ցուցանիշին, ընդ որում՝ բարձր ցուցանիշներ են արձանագրել նաև Հարավային Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրները: Չգալիորեն ցածր են եղել Հյուսիսային և Կենտրոնական Ամերիկայի երկրների աճի ցուցանիշները:

ՄԱԿ-ի ՋՀԿ-ի տվյալների համաձայն՝ 2008 թվականից սկսած՝ 10 ավելի հաճախ այցելվող երկրների շարքը մնացել է անփոփոխ: Առաջատար է համարվում Ֆրանսիան, որը 2008թ. ընդունել է 74.2 մլն այցելու, ինչը, սակայն, 6.3%-ով նվազել է նախորդ տարվա համեմատ: 2010թ. այս երկիր է ժամանել 76.8 մլն այցելու: Հաջորդ երկիրը, որը թեև զգալի չափով զիջել է Ֆրանսիային, ԱՄՆ-ն է, ուր այցելել է 59.75 մլն գրոսաշրջիկ (նախորդ տարվա համեմատ ացելուների թվաքանակի աճը՝ 3.5%): Ահա լավագույն տասնյակը կազմող մյուս երկրների ցուցանիշները. Չինաստան՝ ընդունել է 55.67 մլն գրոսաշրջիկ, Իսպանիա՝ 52.68 մլն, Իտալիա՝ 43.63 մլն, Միացյալ Թագավորություն՝ 28.13 մլն, Թուրքիա՝ 27.00 մլն, Գերմանիա՝ 26.88 մլն, Մալայզիա՝ 24.58 մլն, Մեքսիկա՝ 22.40 մլն գրոսաշրջիկ: Նկատենք նաև, որ նախորդ տարվա համեմատ լավագույն տասնյակը կազմող երկրների զբաղեցրած տեղերը գրեթե անփոփոխ են մնացել, միայն Իսպանիան իր դիրքերը զիջել է Չինաստանին: Այս երկրի գրոսաշրջիկների թիվն աճել է 9.3%-ով, որի շնորհիվ այն կարողացավ 4-րդ հորիզոնականից բարձրանալ 3-րդ հորիզոնական: 2008-2010թթ. զգալի փոփոխությունների է ենթարկվել Մալայզիայի գրոսաշրջության պատկերը: Եթե 2007թ. գրոսաշրջիկների թվաքանակն այս երկրում կազմել էր 17.5 մլն, ապա 2009թ. պատկերն էապես փոխվեց. այդ թվականից Մալայզիան արդեն առաջին տասնյակի թվում էր:

Մինչ այդ լավագույն տասնյակի մեջ մտնում էր նաև Ուկրաինան, որը սակայն դուրս է մնացել այդ շարքից [5]:

Ուսումնասիրելով Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից կատարված հետազոտությունները՝ պարզվեց, որ երկրներն ըստ մրցունակության գործոնների առանձնացելու դեպքում ակնհայտ է դառնում որոշակի հակասություն. նշված 10 առաջատար երկրներից 5-ը իրենց մրցունակությամբ զգալիորեն զիջում են մյուսներին: Հայտնի է, որ այդ հետազոտության առարկա է ընտրվել 139 երկիր և ուսումնասիրվել գործոնների բավական լայն շրջանակ՝ ներառելով զբոսաշրջության ոլորտի կարգավորումը, պետական օժանդակությունը, գնային մրցունակությունը, ենթակառուցվածքների և մարդկային, մշակութային, բնական ռեսուրսների առկայությունը: Ուսումնասիրության արդյունքում առանձնացված մրցունակ երկրների տասնյակը կազմում են Շվեյցարիան, Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրիան, Շվեդիան, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Կանադան, Սինգապուրը [6,103]:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությանը՝ նշենք, որ մեր երկրում զբոսաշրջությունը համարվում է տնտեսության գերակա ճյուղ, որը պետք է գտնվի պետական հոգածության ներքո, ստանա մշտական անհրաժեշտ օգնություն և աջակցություն: Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության այն բացառիկ ճյուղերից էր, որը նույնիսկ տնտեսության ընդհանուր անկման պայմաններում, թեև ոչ շատ դինամիկ, այնուամենայնիվ զարգացման միտում ուներ: Այսպես, 1999թ. Հայաստան այցելուների թվաքանակը կազմել է շուրջ 40 հազար, մինչդեռ 1992-1993 թվականներին՝ ընդամենը 4-5 հազար: Այս հաշվարկով, 1999թ. միայն միջազգային զբոսաշրջության ոլորտում զբոսաշրջային արդյունքի արտահանումը կազմել է շուրջ 40 մլն ԱՄՆ դոլար: Համեմատության կարգով նշենք, որ խորհրդային տարիներին զբոսաշրջային արդյունքի արտահանման լավագույն տարում՝ 1987 թվականին, Հայաստան է այցելել շուրջ 500 հազար զբոսաշրջիկ, որից միայն 100 հազարը եղել է ոչ նախկին ԽՍՀՄ տարածքից: Ներկայումս իրավի-

ճակը փոխվել է. ՀՀ-ն ընդլայնել է իր զբոսաշրջային շուկայի աշխարհագրությունը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զբոսաշրջության ոլորտի զարգացումը և զբոսաշրջային արդյունքի արտահանման ծավալների ընդլայնումը մեծապես կախված են պետության կողմից վարվող զբոսաշրջային քաղաքականության արդյունավետությունից [7,135]: Վերջին տարիներին ՀՀ զբոսաշրջության ոլորտում տարվող պետական քաղաքականության շնորհիվ այս բնագավառում պետություն-մասնավոր հատված-սփյուռք համագործակցությունն արձանագրել է ինչպես քանակական, այնպես էլ որակական աճ: Այդ մասին են վկայում այն գործընթացները, որոնք միտված են զբոսաշրջության ոլորտի օրենսդրական, հարկային, ենթակառուցվածքային զարգացումներին: Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի ներգնա զբոսաշրջությունն աչքի է ընկել զբոսաշրջային այցելությունների թվաքանակի կայուն տարեկան աճով: 2001-2010թթ. ներգնա զբոսաշրջային այցելությունների թվաքանակի միջին տարեկան աճը կազմել է 24.3%: ՀՀ միջազգային զբոսաշրջության շարժը 2006-2011թթ. ներկայացված է Աղյուսակ 1-ում:

*Աղյուսակ 1.*

ՀՀ միջազգային զբոսաշրջության շարժը 2006-2011թթ. (մարդ) [8]

Տարիներ	Ժամանողներ	աճ (%)	Մեկնողներ	աճ (%)
2006	381136	19.6	329347	22.6
2007	510287	33.8	467574	41.9
2008	558443	9.4	515547	10.2
2009	575281	3.1	526193	2.1
2010	687229	18.8	640032	21.6
2011	757935	10.8	714953	10.3

Աղյուսակ 1-ում բերված տվյալներից երևում է, որ զբոսաշրջության նպատակով Հայաստան այցելուների թիվը հաստատապես աճում է: Այսպես օրինակ՝ 2011թ. 73956-ով ավելի շատ մարդ է այցելել Հայաստան, քան 2010թ.: Դա պայմանավորված է նրանով, որ ՀՀ-ն ակտիվ քաղաքականություն է իրականացնում զբոսաշրջության ոլորտն ավելի գրավիչ և ճանաչելի դարձնելու ուղղությամբ: Ներգնա զբոսաշրջության հետ մեկտեղ աճել են նաև արտագնա զբոսաշրջության ծավալները. 2011թ. ՀՀ ժամանող և Հայաստանից մեկնող զբոսաշրջիկների թվաքանակի տարբերությունը կազմել է 42982:


Ներգնա զբոսաշրջությունը խթանելու նպատակով՝ 2010 թվականին ՀՀ օրենսդրական ոլորտում աշխատանքներ են իրականացվել հարկային քաղաքականության և վիզային ռեժիմների ազատականացման ու դյուրացման ուղղությամբ:

2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետություն է ժամանել 551635 զբոսաշրջիկ: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ զբոսաշրջիկների թվաքանակն աճել է 13.1%-ով: Այդ ընթացքում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 546167 մարդ: 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ ցուցանիշի աճը կազմել է 15.1%: 2011թ. ամբողջ տարվա ընթացքում հանրապետություն է ժամանել 757935 զբոսաշրջիկ (ցուցանիշի աճը 2010թ. համեմատ՝ 10.3%): Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 714953 մարդ: Տվյալ ցուցանիշը 2010թ. հունվար-դեկտեմբեր ամիսների համեմատ աճել է 10.3%-ով: Բերված ցուցանիշների աճի տեմպերը վկայում են, որ տարեցտարի ընդլայնվում է արտերկրի քաղաքացիների հետաքրքրությունը Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի նկատմամբ: Հաշվի առնելով զբոսաշրջային արդյունաբերության մեջ ներկայումս իրականացվող պետական և մասնավոր ծրագրերի ծավալները՝ ակնկալվում է զբոսաշրջային այցելությունների քանակի 20% աճ 2012 թվականին [9, 12]:

Հյուրանոցային տնտեսությունից ստացված հաշվետվությունների տվյալների համաձայն՝ 2010թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի 30%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին: Ինչպես երևում է գծանկար 1-ից, Ռ-Դ-ն, ԱՊՀ մյուս երկրները և ԱՄՆ-ը շարունակում են մնալ Հայաստանի զբոսաշրջային հիմնական շուկաները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս երկրներում առավել մեծ թիվ են կազմում Հայաստանի զբոսաշրջային պոտենցիալ շուկայի մեծ հատվածը՝ սփյուռքահայերը:

*Գծանկար 1*

ՀՀ այցելած զբոսաշրջիկների քաղաքացիության աշխարհագրական բաշխվածությունը 2010թ. (%)



Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրական զբոսաշրջային պոտենցիալը՝ կարող ենք նշել, որ մեր երկիրը ի գործ է առաջարկելու գրավիչ համադրությամբ զբոսաշրջային արդյունք: Այսպիսի հետևությունն իրատեսական համարելու հիմք են տալիս երկրի մշակութային հարուստ ժառանգությունը, ազգային կոլորիտը, հյուրընկալության ինքնատիպ ավանդույթները, էկոլոգիապես մաքուր բնության առկա-

յությունը, գրավիչ տեսարժան վայրերը, առողջարանները, սպորտային բազաները, բազմազան հանգստի վայրերը և այլն: Հետևաբար՝ կարող ենք պնդել, որ Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները՝ շահեկանորեն դիրքավորվելու և իր ուրույն տեղը գրավելու միջազգային զբոսաշրջային շուկայում: Դա, անշուշտ, պահանջում է զբոսաշրջային ռեսուրսների համակողմանի ուսումնասիրություն, համալիր և ճշգրիտ գնահատում, համաշխարհային շուկայում պահանջարկի և հայկական զբոսաշրջային առաջարկի (զբոսաշրջային արդյունք, ծառայություններ) վերանայում, այնուհետև՝ հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում համաշխարհային շուկայի՝ մեզ համար առավել հետաքրքրություն ներկայացնող թիրախային հատվածներում (աշխարհագրական, կրոնական, մշակութային և այլն):

Հայաստանում զբոսաշրջության խթանման համար նպատակային երկրներն ընտրվում են վիճակագրական տվյալների ուսումնասիրության հիման վրա: Ուսումնասիրությունները և բերված ցուցանիշների աճի տեմպերը վկայում են, որ տարեցտարի մեծանում է Եվրոպական երկրների հետաքրքրությունը Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի նկատմամբ: Այսօր եվրոպական երկրներից Հայաստանի համար զբոսաշրջային առավել մեծ պոտենցիալ ունեն Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Իսպանիան, Հունաստանը, Կիպրոսը, Չեխիան, Միացյալ Թագավորությունը, Ավստրիան: ՀՀ սահմանային անցման կետերում հավաքագրված տվյալներով՝ 2010թ. նկատվել է եվրոպական տարածաշրջանից դեպի Հայաստան այցելությունների թվի զգալի աճ (20.78%): Նկատենք, որ այստեղ խոսքը հանգստի համար Հայաստան ժամանող և հայկական արմատներ չունեցող զբոսաշրջիկների մասին է, որոնց թիվը համեմատաբար հեշտ է ավելացնել՝ օգտագործելով ժամանակակից աշխարհում լայնորեն կիրառվող ավանդական և նորարարական մարքեթինգային գործիքները: Այստեղ, միաժամանակ պետք է հաշվի առնել նաև այն, որ շուկայում աստիճանաբար ավելի ու ավելի նկատելի է դառ-

նում նոր երկրներ փնտրելու ձգտումը: Այս առումով՝ հարկ է նշել, որ 2010թ. այցելությունների աճի միտում է նկատվել Չեխիայից, ինչպես նաև Սկանդինավյան երկրներից (Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա):

Հայաստանն, զբոսաշրջային զգալի ներուժ ունենալով հանդերձ, այնուամենայնիվ, ներկայումս աննշան տեղ է զբաղեցնում համաշխարհային զբոսաշրջության շուկայում ոչ միայն իր չափաբաժնով, այլև մրցունակության այսօրվա հնարավորություններով: Համաձայն համաշխարհային տնտեսական ֆորումի՝ աշխարհի 139 երկրների ցանկում ՀՀ-ն զբաղեցնում է 90-րդ հորիզոնականը: Այն իր մրցունակության գործոններով զիջում է հարևան երկրներ Վրաստանին, Ադրբեջանին, Թուրքիային, առաջ է անցել միայն Իրանից: ՀՀ-ի ուժեղ կողմերից է համարվում հարևան երկրների համեմատ սանիտարահիգիենիկ պայմանների համեմատաբար բարվոք վիճակը, ինչպես նաև տեղական բնակչության՝ արտասահմանյան զբոսաշրջիկների նկատմամբ բաց լինելն ու բարեհամբույր վերաբերմունքը:

Ելնելով մրցունակության բարձրացման նպատակներից՝ համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում առանձնահատուկ կարևորություն է ստանում տնտեսության առանձին ճյուղերի և ոլորտների դիվերսիֆիկացումը (բազմազանեցումը): Վերջինս Հայաստանի համար առավել հրատապ խնդիր է տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից: Դա առաջին հերթին վերաբերում է արտահանման ներուժ ունեցող ճյուղերի և ոլորտների զարգացմանը: Այս տեսանկյունից, զբոսաշրջությունը Հայաստանում տնտեսության դինամիկ զարգացող և առավել հեռանկարային ճյուղերից մեկն է, որի զարգացումը մեծ չափով կարող է նպաստել մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Հայաստանում զբոսաշրջության զարգացման ներուժը գնահատելիս, պատմամշակութային ժառանգությունից բացի, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ մեր երկիրը միջազգային զբոսաշրջային շուկայում համարվում է նոր օբյեկտ, ինչն էլ երկիրը

դարձնում է առավել հետաքրքիր ու գրավիչ՝ համապատասխան մարքեթինգային գործողությունների իրականացման և ուղորտի արդյունավետ մենեջմենթի արդյունքում: Իհարկե, Հայաստանի ազգային մրցունակությունը միայն զբոսաշրջության վրա չի կարելի կառուցել, սակայն այս ուղորտը հույժ կարևորություն ունի մի քանի պատճառով: Առաջին՝ Հայաստանի պատմամշակութային և բնական հարստությունն ինքնին մրցակցային առավելություն է, որն անպայման պետք է արժևորել: Երկրորդ՝ զբոսաշրջությունն արտահանման ուղորտ է, մինչդեռ երկիրն այս հարցում լուրջ խնդիրներ ունի: Երրորդ՝ զբոսաշրջության շնորհիվ ֆինանսական հոսքեր և ներդրումներ են ուղղորդվում դեպի մարզեր՝ նպաստելով մարզերի համաչափ զարգացման կառավարական ծրագրերի լիարժեք իրականացմանը:

Թեև զբոսաշրջությունը ՀՀ կառավարության կողմից հռչակված է տնտեսության գերակա ճյուղ, սակայն ուղորտը դեռևս չի գտնվում պետական ակտիվ վերահսկողության ներքո, մինչդեռ պետական միջամտությունը ուղորտի առաջընթացի ապահովման հիմնական պայմաններից է, և այն պետք է իրականացվի գործուն լծակների միջոցով: Եթե տնտեսության պետական կարգավորման խնդիրը լիներ միայն օրենսդրական դաշտի ձևավորումն ու դրանից բխող նորմատիվ-իրավական ակտերի պահանջների հետևողական կատարումը, ապա տնտեսության կարգավորման համակարգի ստեղծումը և անցումային շրջանի հաղթահարումը շատ ավելի դյուրին կընթանար: Սակայն գործընթացի բարդությունն այն է, որ զբոսաշրջության ուղորտի պետական խելամիտ կարգավորման նպատակով անհրաժեշտ է ստեղծել նաև շուկայական այնպիսի ենթակառուցվածքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի պետության կողմից կիրառվող լծակների ազդեցությունն ուղղել կարգավորման օբյեկտներին՝ դրանց գործունեությանը հարողելով ցանկալի և անհրաժեշտ ուղղվածություն:

Լուրջ խնդիր է նաև ենթակառուցվածքների զարգացման ներկա, մեղմ ասած, ոչ բավարար մակարդակը: Խիստ հրա-



տապ է հատկապես տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացման խնդիրը: Լուրջ խնդիրներ կան կապի և հեռահաղորդակցության ոլորտում, որի ենթակառուցվածքները դեռևս պատշաճ կարգով հասանելի չեն հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ-ում գրեթե անտեսված են մարքեթինգային գործողությունները: Թեև Հայաստանը հարուստ պատմամշակութային ժառանգությամբ հայտնի երկիր է, սակայն երկիրը դեռևս լիարժեք ներկայացված չէ համաշխարհային զբոսաշրջային շուկայում: Անգամ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից ՀՀ-ի մշակութային ռեսուրսները գնահատվել են ցածր նույնիսկ հարևան երկրների համեմատ:

Ստեղծված վիճակը կարող է շտկվել առաջին հերթին պետական ակտիվ քաղաքականության իրականացման շնորհիվ Հայաստանի զբոսաշրջային ներուժը զարգացնելու, երկիրն իր ամբողջ հմայքով ներկայացնելու և գրավիչ դարձնելու համար:

Անվիճելի է, որ երկրի զարգացած տնտեսությունը զբոսաշրջության ոլորտի հետագա առաջընթացի որոշիչ պայման է: Սակայն զբոսաշրջությունը համակարգային բնույթի բնագավառ է, ուստիև շատ կարևոր է ոչ միայն ապահովել զբոսաշրջության՝ տնտեսության այլ ոլորտներին համընթաց զարգացումը, այլև նպաստավոր պայմաններ ստեղծել միջազգային զբոսաշրջային շուկային ակտիվորեն ինտեգրվելու համար:

**Առանցքային հասկացություններ.** *միջազգային զբոսաշրջություն, մրցունակության գործոններ, զբոսաշրջային շուկա, զբոսաշրջային ներուժ, Չբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն, Համաշխարհային տնտեսական ֆորում, զբոսաշրջիկ, զբոսաշրջային արդյունք, հյուրանոցային տնտեսություն, զբոսաշրջային արդյունաբերություն, ներգնա զբոսաշրջություն, արտագնա զբոսաշրջություն, զբոսաշրջային ռեսուրսներ, զբոսաշրջային ծառայություններ:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Воскресенский В.Ю. Международный туризм. М.: ЮНИТИ-ДАНА, 2006. - 255 с.
2. UNWTO Annual Report a year of recovery 2010. URL: [https://s3-eu-west-1.amazonaws.com/storageapi/sites/all/files/pdf/final\\_annual\\_report\\_pdf\\_3.pdf](https://s3-eu-west-1.amazonaws.com/storageapi/sites/all/files/pdf/final_annual_report_pdf_3.pdf) (Վերջին մուտքը՝ 25.05. 2012թ.)
3. World tourism organization. Press Release. International tourism receipts surpass US\$ 1 trillion in 2011. URL: <http://media.unwto.org/en/press-release/2012-05-07/international-tourism-receipts-surpass-us-1-trillion-2011> (Վերջին մուտքը՝ 17.05. 2012թ.)
4. UNWTO World Tourism Barometer URL: [http://www.unwto.org/facts/eng/pdf/barometer/UNWTO\\_Barom11\\_iu\\_april\\_excerpt.pdf](http://www.unwto.org/facts/eng/pdf/barometer/UNWTO_Barom11_iu_april_excerpt.pdf) (Վերջին մուտքը՝ 27.05. 2012)
5. Economy statistics. Tourist arrivals (most recent) by country. URL: [http://www.nationmaster.com/graph/eco\\_tou\\_arr-economy-tourist-arrivals](http://www.nationmaster.com/graph/eco_tou_arr-economy-tourist-arrivals) (Վերջին մուտքը՝ 03.06. 2012թ.)
6. The Travel & Tourism Competitiveness Report 2011. URL: [http://www3.weforum.org/docs/WEF\\_TravelTourismCompetitiveness\\_Report\\_2011.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_TravelTourismCompetitiveness_Report_2011.pdf) (Վերջին մուտքը՝ 02.06.2012թ.)
7. Папирян Г. А. Международные экономические отношения. Экономика туризма. М.: Финансы и статистика, 2000. - 208 с.
8. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011 թվականների հունվար-դեկտեմբերին: URL: <http://armstat.am/am/?nid=81> (Վերջին մուտքը՝ 03.06.2012թ.)
9. ՀՀ զբոսաշրջության բնագավառի վերլուծություն 2010թ.: ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, URL: [http://mineconomy.am/up/files/210\\_zbosashrjutyun\\_verlucutyun-168.pdf](http://mineconomy.am/up/files/210_zbosashrjutyun_verlucutyun-168.pdf) (Վերջին մուտքը՝ 26.05.2012թ.)

**Л. А. АВЕТИСЯН, Л. Г. САРГСЯН**  
**ПРОБЛЕМЫ ИНТЕГРАЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**  
**В МИРОВОЙ ТУРИСТСКИЙ РЫНОК**

**Резюме**

В статье анализированы современные тенденции развития международного туризма. Исследованы ведущие страны на мировом туристском рынке, а также распределение международных туристских доходов по регионам. Рассмотрено исследование конкурентоспособности стран в сфере туризма, проведенное Всемирным экономическим форумом. В этом контексте представлено место Армении на мировом туристском рынке. Учитывая туристский потенциал РА и анализируя тенденции развития въездного туризма в Армении, выявлены проблемы в этой сфере, а также препятствия на пути интеграции РА в мировой туристский рынок и предложены некоторые способы их преодоления.

**Ключевые понятия:** *международный туризм, факторы конкурентоспособности, туристский рынок, туристский потенциал, Всемирная организация по туризму, Всемирный экономический форум, турист, туристский продукт, гостиничное хозяйство, туристская индустрия, въездной туризм, выездной туризм, туристские ресурсы, туристские услуги.*

**L. A. AVETISYAN, L. G. SARGSYAN**  
**ARMENIA'S PROBLEMS OF INTEGRATION INTO THE**  
**GLOBAL TOURISM MARKET**

**Summary**

The current trends of international tourism development were analyzed. The leading countries in the International tourism

market were explored, as well as tourism incomes by regions distribution were also investigated. The research of the competitiveness of nations in the tourism sector conducted by the World Economic Forum were observed. In this context the place of Armenia in the global tourism market was presented. Taking into consideration the tourism potential of the Republic of Armenia and analyzing the tendencies of development of inbound tourism in Armenia the problems of the area and barriers to the integration of Armenia into the global tourism market were disclosed and some suggested ways of overcoming them were recommended.

**Key concepts.** *international tourism, factors of competitiveness, tourism market, tourism potential, World Tourism Organization, World Economic Forum, tourist, tourism product, hotel economy, tourism industry, inbound tourism, outbound tourism, tourism resources, tourism services.*

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### Ե. Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Անցյալ դարի վերջից աշխարհն ապրեց հեղաշրջում՝ իրականացավ մարդկային գործունեության բոլոր ուղղությունների էկոլոգիացում: Հատկապես այն առավել կարևորվեց արդյունաբերության բնագավառում: Պատահական չէր, որ շատ երկրներում, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ-ում սկսված բնապահպանական շարժումը ձևավորվեց որպես «կանաչ հեղափոխություն»՝ բերելով այդ մեծ կայսրության կործանմանը: Այդպես եղավ նաև մեր երկրում՝ Հայաստանում, երբ «Նաիրիտի» բնապահպանական գործունեության դեմ սկսված գործունեությունների շղթան օգտագործվեց համաժողովրդական շարժման զարգացմանը՝ բերելով երկրում քաղաքական փոփոխությունների: Ցավոք դրանք ուղեկցվեցին նաև բացասական տնտեսական և սոցիալական բարդությներով, հավանաբար, հատուկ բոլոր հեղափոխություններին:

1. հաշվի վրա եղած նպատակային մնացորդը չի համարվում վերին և ստորին սահմանի միջին մեծություն: Եթե սահմաններ նպատակային մնացորդը միջին մեծության հետ, ապա տրանսակցիոն ծախսերը կհասնեն նվազագույնի, բայց եթե նրանք սահմանվեն պակաս միջին մակարդակից, ապա արդյունքը կլինի այլընտրանքային ծախսերի մեծությունից պակաս:

2. Դրամական միջոցների մնացորդների նպատակային մեծությունը և նրա տատանումները արժեթղթերի փոխարկելիության հետ կապված մեծանում են:

3. Նպատակային մնացորդի մեծությունը կրճատվում է տոկոսադրույքի մեծացման հետ կապված, քանի որ աճում է այլընտրանքային ծախսերի գումարը և ֆիրման ձգտում է միջոցներ ներդնել, այլ ոչ թե պահպանել այն հաշվի վրա:

Միլերա-Օրրայի մոդելի փորձը կիրառելով՝ նրա առավելությունները գործնական կառավարման մեջ նկատելի են, սակայն եթե ֆիրման ունի ազատ դրամական միջոցների ներդրման մի քանի այլընտրանքային տարբերակներ, ապա մոդելը դադարում է գործել:

Չնայած օպտիմալ հաշվարկների ճշգրիտ մաթեմատիկական հաշվարկներին՝ դրամական ակտիվների մնացորդները բերված տվյալ մոդելի մեջ դեռևս դժվար է կիրառել ֆինանսական մենեջմենթի հայրենական պրակտիկայում հետևյալ պատճառներից ելնելով.

- շրջանառու ակտիվների մշտական բացակայությունը թույլ չի տալիս ձեռնարկություններին ձևավորել դրամական միջոցների մնացորդ անհրաժեշտ չափերով, հաշվի առնելով նրանց չափերը;

- վճարման շրջանառության դանդաղեցումը առաջացնում է գզալի տատանումներ կախված դրամական մուտքերի չափերից, որն էլ համապատասխանաբար արտահայտվում է դրամական ակտիվների մնացորդի գումարի վրա;
- կարճաժամկետ ֆոնդային սարքավորումների սահմանափակ քանակությունը և ցածր լիկվիդայնությունը դժվարացնում են ցուցանիշների հաշվարկների կիրառումը, որը կապված է կարճաժամկետ ֆինանսական ներդրումների հետ:

Դրամական հոսքերի օպտիմիզացիայի երկրորդ ուղղությունը համարվում է նրա վճարային շրջապտույտի օպտիմիզացիան: Օպտիմալացման հիմքը կազմում է հավասարակշռության ծավալի ապահովումը դրական և բացասական դրամական հոսքերի ապահովումով ժամանակի ընթացքում: Ձեռնարկության տնտեսական գործունեության արդյունքների վրա բացասական ազդեցություն ունենում են ինչպես դեֆիցիտային, այնպես էլ ավելցուկային դրամական հոսքերը:

Դրամական հոսքերի դեֆիցիտի բացասական հետևանքները հանդես են գալիս լիկվիդայնության իջեցման դեպքում և ձեռնարկության վճարունակության մակարդակի իջեցման ժամանակ:

Դրամական հոսքերի բացասական ազդեցությունը հանդես է գալիս իրական արժեքի կորստի մեջ ժամանակավոր չօգտագործվող դրամական միջոցների դեպքում, երբ կորչում են դրամական ակտիվների եկամուտը չօգտագործվող մասից, որն էլ ի վերջո բացասաբար է անդրադառնում ակտիվների շահույթի մակարդակի վրա: Դեֆիցիտային դրամական հոսքերի օպտիմալացման մեթոդները կախված են այդ դեֆիցիտի բնույթից - երկարաժամկետ կամ կարճաժամկետ:

***Առանցքային հասկացություններ.*** Դրամական հոսքեր, ձեռնարկության ամենակարևոր ակտիվներ, դրամական միջոցներ, դրամական միջոցների կառավարում, դրամի պահանջարկ, ֆինանսական կայունություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայադյան Ա., Ձեռնարկությունների ֆինանսական դրու-  
թյան գնահատումը, Երևան, 2002թ.:
2. Խաչատրյան Հ., Ֆինանսական և կառավարչական հաշ-  
վապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրա-  
ռական ձեռնարկությունների ժողովածու, Երևան, 1977թ.:
3. Հայաստանի հաշվապահության հաշվառման ստան-  
դարտներ, Երևան, 1999թ.:
4. Ձեռնարկության արդյունավետ կառավարում/գործարար  
խաղի մեթոդիկա/արոֆ. Յու Մ.Սուվարյանի ընդհանուր  
խմբագրությամբ, Երևան, 2001թ.:
5. Մարկոսյան Ա., Պետությունը և շուկան, գիրք առաջին,  
Երևան, 2000թ.:
6. Ջեյմս Գ.Գ., Ռիչարդ Լ.Խ., Տնտեսագիտության /գլխավոր  
խմբագիր՝ արոֆ Գ. Կիրակոսյան/, Երևան, 1999թ.:
7. Акофф Р., Планирование будущего корпорации, М.,  
1985г., стр. 24-25.
8. Кейнч Д., Избранные произведения, М., 1993г., стр. 375-  
377.
9. Хелферт Э., Теория финансового анализа, М., 1996г., 216 с.

**Т.С.Багдасарян**

**Управление денежными потоками и оптимизации методов  
анализа зарубежного опыта**

### Резюме

В статье определяются основные положения управления денежными потоками и оптимизации методов анализа зарубежного опыта. Анализ оптимализации модели денежных методов В. Баумоли и Миллера-Оррая, и даются возможности управления денежными средствами в условиях Армении.

*Ключевые понятия: Денежный поток, самые важные активы предприятий, денежные средства, спрос на деньги, финансовая стабильность.*

**T.S.Baghdasaryan**

**Foreign analyses of the model of the optimization of the application of possible ways of cash flow management**

**Summary**

The article defines the following general provisions of foreign analyses of the model of the optimization of the application of possible ways of cash flow management: the analyses of the model of the optimization of V. Baumolia and Millera-Orray financial means. It also analyses the application of possible ways of cash flow management in Armenia.

**Key concepts:** *Cash flows, important actives of organization, cash resources, fund, management of cash resources, demand for money, financial stability.*



**ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ  
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Տ. Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Յուրաքանչյուր երկրում մետրոյի կառուցումը հանդիսանում է պետության ռազմավարության կարևոր մասը: Այն քաղաքի տրանսպորտային համակարգի կարգավորման խնդրի անփոխարինելի լուծումն է, իսկ մետրոյի կառուցումն անհրաժեշտություն է ցանկացած խոշոր քաղաքի համար: Մետրո կառուցում են, երբ ակնհայտ է դառնում, որ հասարակական տրանսպորտի մյուս տեսակներն այլևս չեն բավարարում փոխադրումների նկատմամբ ուղևորների պահանջարկը, իսկ ինչպես վկայում է համաշխարհային փորձը, այդ խնդրի առջև վաղ թե ուշ կանգնում են բոլոր խոշոր քաղաքները:

Սկզբում նախատեսված լինելով մեծ քաղաքներում տրանսպորտային խցանումների դեմ պայքարի համար, այսօր մետրոյի համակարգերն այլևս չեն սահմանափակվում քաղաքային հասարակական տրանսպորտի բնագավառում օժանդակող ենթակառուցվածքների դերով:

Ներկայումս մետրոն վերածվել է քաղաքային տրանսպորտային քաղաքականության զարգացման համար որոշիչ դեր ունեցող ինքնուրույն կառուցվածքային գործիքի, ինչպես նաև կյանքի որակի բարելավման հիմնական գործոնի:

Հանդիսանալով քաղաքային հասարակական տրանսպորտի անբաժանելի մասը՝ մետրոպոլիտենը տարբերվում է տրանսպորտի մյուս տեսակներից իրեն բնորոշ մի շարք առանձնահատկություններով, ինչպիսիք են անվտանգությունը, հարմարավետությունը, բարձր թողունակությունը, էկոլոգիապես մաքուր լինելը, էներգախնայողությունը և այլն: Բոլոր տրանսպորտային միջոցներն իրենց գործունեության ընթացքում տեղափոխման և կանգառի համար պահանջում են էներգիա և տարածություն: Շնորհիվ էլեկտրաքարշի և ուղևորների

մեծ տարողունակության համադրության, էներգիայի օգտագործման և պահանջվող տարածքի տեսանկյունից, մետրոն հանդիսանում է քաղաքային ուղևորատար տրանսպորտի ամենաարդյունավետ տեսակը: Քաղաքային հասարակական տրանսպորտի խնդիրն է խնայել բնակչության ժամանակը և էներգիան քաղաքի տարածքով տեղաշարժվելիս, ուստի և բնակչության հիմնական պահանջը հասարակական տրանսպորտից հանդիսանում է հաղորդակցության արագությունը: Վերջինիս որոշման ժամանակ հաշվի է առնվում ուղևորի կողմից ծախսվող ժամանակը տրանսպորտ նստելու պահից մինչև դուրս գալը: Էական տարբերություն չի նկատվում վերգետնյա տրանսպորտի տարբեր տեսակների հաղորդակցման արագությունների միջև. մասնավորապես, ավտոբուսի (ներքաղաքային փոխադրումներ) համար այն կազմում է 17-19 կմ/ժ, տրոլեյբուսի համար՝ 17-18 կմ/ժ: Երթուղային տրանսպորտի համար այս ցուցանիշը որոշվում է հետևյալ 3 գործոնների հիման վրա. շարժման արագությունը կայարանների միջև ընկած տարածքում, կանգառներում սպասելու ժամանակահատվածը և ճանապարհին այլ դադարների (օրինակ՝ լուսանշանի) ժամանակահատվածը: Դրա հետ մեկտեղ շարժման ժամանակահատվածը կազմում է 70-80%, կանգառներում սպասելը՝ 15-20%, այլ դադարները՝ 5-10%: Եթե վերգետնյա տրանսպորտի փոխադրման հնարավորությունները կազմում են 4-5 հզ. մարդ/ժամ, առավելագույն արագությունը 60 կմ/ժամ է, իսկ շարժի նվազագույն ինտերվալը 180 վրկ, ապա մետրոպոլիտենի դեպքում այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 50-55 հզ. մարդ/ժամ, 90 կմ/ժամ և 90 վրկ:

**Վերգետնյա և ստորգետնյա տրանսպորտով  
ուղևորափոխադրումների ցուցանիշները[1, 2-3]<sup>1</sup>**

Ցուցանիշի անվանումը	Վերգետնյա տրանսպորտ	Մետրոպոլիտեն
Փոխադրման հնարավորությունը հզ. մարդ/ժամ	4-5	50-55
Առավելագույն արագությունը կմ/ժամ	60	90
Տեղամասային արագությունը կմ/ժամ <sup>1</sup>	10-18	42
Շարժի նվազագույն ինտերվալը վրկ.	180	90

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, մետրոպոլիտենը բոլոր ցուցանիշներով կրկնակի գերազանցում է տրանսպորտի մյուս տեսակներին: Սակայն, եթե մետրոպոլիտենի համար հաղորդակցման արագությունը հաշվարկենք հաշվի առնելով ուղևորի գտնվելու ժամանակահատվածը մետրոպոլիտենում (մուտքի դռներից ներս մտնելուց մինչև մետրոպոլիտենից դուրս գալը), ապա մետրոպոլիտենի առավելությունները վերգետնյա տրանսպորտի նկատմամբ որոշ չափով համահարթվում են:

Այն ամբողջ ժամանակահատվածը, որի ընթացքում ուղևորը գտնվում է մետրոյում, պայմանականորեն բաժանվում է 2 մասի. տեղափոխման ժամանակահատված (գնացք մտնելու պահից մինչև դուրս գալը) և լրացուցիչ ժամանակահատված (մատույցին մոտենալը, գնացքին սպասելը, մետրոյից դուրս

<sup>1</sup> Տեղամասային արագությունը երկու կայարանների միջև գնացքի շարժման արագությունն է: Վերջինս գնացքների երթևեկության գրաֆիկների կատարման ցուցանիշ է և չափվում է կմ/ժամ-ով:

գալը): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մետրոյում ուղևորը ժամանակի մոտ 55%-ը ծախսում է տեղափոխման վրա և ընդհանուր ժամանակի մոտ 45%-ը մետրոպոլիտենի ներսում լրացուցիչ տեղաշարժի վրա: Ուստի, հաղորդակցման արագությունը, առանց հաշվի առնելու լրացուցիչ ժամանակահատվածը, մետրոպոլիտենում նվազում է մինչև մոտ 21-22 կմ/-ժամ: Սակայն հաղորդակցման արագության մման պատկերը մետրոպոլիտենում չի կարելի համեմատել վերգետնյա տրանսպորտի նույն ցուցանիշի հետ, քանի որ վերջիններս հաշվարկելիս հաշվի չեն առնվել ուղևորի մինչև կանգառ հասնելու, տրանսպորտին սպասելու, տրանսպորտը փոխելու ժամանակահատվածը: Նշված գործոնները հաշվի առնելուց հետո միայն կարող ենք ասել, որ վերգետնյա տրանսպորտի հաղորդակցման արագությունը կնվազի 10-15%-ով:

Ըստ ֆրանսիական «RATP International» տրանսպորտային կազմակերպության ուսումնասիրությունների՝ 1 ժամում 1 ուղևորյամբ 50000 ուղևորի փոխադրման համար մետրոպոլիտենին անհրաժեշտ է 9 մ լայնությամբ միջանցք, ավտոբուսին՝ 35 մ, իսկ անճնական օգտագործման ավտոմեքենային՝ 175 մ: Փորձագիտական հաշվարկները վկայում են, որ 1 կգ նավթին համարժեք էներգիա ծախսելու դեպքում, մետրոպոլիտենով ուղևորը կարող է փոխադրվել 48 կմ տարածք, ավտոբուսով 38 կմ և թեթև մարդատար ավտոմեքենայով ընդամենը՝ 19 կմ [2, 32]: Բացի այդ, Գ-ՏԱ-ի նվաճումները թույլ են տալիս մետրոպոլիտենին ապահովել էներգիայի ետ վերադարձ գնացքի արգելակման պահին, ինչը բերում է էներգիայի լրացուցիչ խնայողության:

Իր աշխատանքի ընթացքում մետրոպոլիտենը մթնոլորտը չի աղտոտում արտանետվող գազերով և չի ստեղծում ջերմային ազդեցություն: Մթնոլորտի վրա վերջինիս բացասական ազդեցությունը սահմանափակվում է միայն էլեկտրաէներգիայի արտադրությամբ պայմանավորված ներգործությամբ:

Վերջապես, որպես հանրային տրանսպորտի միջոց, որն իր գործունեությունն իրականացնում է ստորգետնյա միջա-

վայրում, մետրոն չի զբաղեցնում քաղաքային վերգետնյա տարածքները՝ դրանք թողնելով քաղաքաշինության համար և դրանով հանդերձ բարձրացնելով բնակչության կյանքի որակը:

Մետրոպոլիտենն իր ուրույն տեղն ունի քաղաքային միջավայրի ինտեգրման հարցում: Ինչպես արդեն նշվել է, այն ունի բարձր թողունակություն և, որպես այդպիսին, լուրջ կառուցվածքային ազդեցություն է թողնում ողջ քաղաքի վրա: Վերջինս հանդիսանում է այն կարկասը, որի շուրջ տարվում է բնակելի շենքերի կառուցապատումը, ակտիվանում է քաղաքի սոցիալ-տնտեսական և մշակութային գործունեությունը և կենտրոնանում են ուղևորատար տրանսպորտի մյուս տեսակները:

Այս իմաստով մետրոպոլիտենն իսկապես մեծ դեր է խաղում խոշոր քաղաքներում իրականացվող տրանսպորտային, քաղաքաշինական և սոցիալական քաղաքականության ինտեգրման հարցերում: Նրա գործառույթները դուրս են գալիս ուղղակի ուղևորափոխադրումների սահմաններից և դառնում են հզոր ինտեգրող գործոն, որն էականորեն ազդում է քաղաքներում կենսամակարդակի բարձրացման վրա:

Ներկայումս մետրոպոլիտենների հիմնական խնդիրն անվտանգության ապահովումն է: Քանի որ աշխարհի մասշտաբով տրանսպորտային համակարգում մետրոյին է պատկանում ուղևորափոխադրումների գերակշիռ մասը, ուստի արդարացված ու արդիական է, որպեսզի մշտապես ուշադրության կենտրոնում լինի մետրոյի անվտանգությունը:

Մետրոպոլիտենը, որպես կանոն ամենաանվտանգ տրանսպորտի տեսակն է, սակայն վերջին տարիներին, աշխարհի տարբեր մետրոպոլիտեններում տեղի ունեցած պատահարները, հրդեհները և ահաբեկչական գործողությունները զանգվածային լրատվամիջոցներում այնպիսի լուսաբանում են ստացել, որը հրահրել է միայն հասարակական կարծիքի բացասական արձագանք: Ուստի, բոլոր շահագրգիռ կողմերն անում են այն ողջ հնարավորը, որպեսզի մետրոն դարձնեն,

որքան հնարավոր է անվտանգ և անխոցելի[3]: Չնայած հասարակական տրանսպորտի համակարգում իր ուրույն ու կարևոր դերին, այսօր Երևանի մետրոպոլիտենը գտնվում է վատթար վիճակում և պահանջում է աշխատանքային գործունեության մանրակրկիտ վերլուծություն:

Մետրոպոլիտենի հիմնական խնդիրն ուղևորների սպասարկման բարձր մակարդակի և ուղևորափոխադրումների աճի ապահովումն է: Վերջինս ի տարբերություն աշխարհի զարգացած քաղաքների մետրոպոլիտենների, ուներ նվազման միտում, իսկ վերջին մի քանի տարիներին նկատվող աճը չնչին է: Դրա պատճառների բացահայտման համար պետք է իրականացնել վերլուծություն նախ տնտեսական տեսանկյունից, որի համար անհրաժեշտ է ուսումնասիրել շուկայական հարաբերություններին անցման սոցիալական հետևանքների և հասարակական տրանսպորտի զարգացման օբյեկտիվ չափանիշների փոխհարաբերությունը:

Ընդհանրապես, մետրոպոլիտենի տնտեսական գործունեությունը բնութագրվում է մի շարք կարևոր ցուցանիշներով, ինչպիսիք են. ուղևորափոխադրումների ծավալը, եկամուտները, ծախսերը, ֆինանսական ցուցանիշները, տեխնիկական տվյալները և այլն:

Երևանի մետրոպոլիտենն ունի ուղևորների սպասարկման բարձր կուլտուրա: Այն բավականին տրամադրող տրանսպորտային միջոց է նախ ջերմային ռեժիմի տեսանկյունից. ձմռանը տաք է, ամռանը՝ զով: Բացի այդ, կայարանային համալիրները, վագոնների սրահները և ընդհանրապես ողջ ենթակառուցվածքը գտնվում է մաքուր վիճակում, վագոնների նստատեղերը հարմարավետ են, թեպետ ոչ ժամանակակից, աշխատակիցները բարեհամբույր են և ուշադիր ուղևորների նկատմամբ:

Մակայն ժամանակի և տեղափոխման տեսանկյունից Երևանում մետրոն կարող է համարվել ոչ արդյունավետ: Հաշվի առնելով մեր քաղաքի տրանսպորտային համակարգում տիրող ներկա իրավիճակը, այսինքն՝ այն, որ միկրոավտո-

բուսները գերակշռում են հասարակական տրանսպորտի մյուս բոլոր տեսակներին և աշխատում են «առանց կանգառի» սկզբունքով, այսինքն՝ կանգ են առնում ուղևորին անհրաժեշտ, կանգառից դուրս ցանկացած վայրում, ուստի այս տեսանկյունից մետրոպոլիտենը դառնում է ոչ հարմարավետ:

Անվտանգության տեսանկյունից, մետրոն թեև զինված չէ ժամանակակից սարքավորումներով, բայց անվտանգությունը գտնվում է պատշաճ մակարդակի վրա: Մետրոյի բոլոր կայարաններում հերթապահում են հսկիչ ոստիկանները: Բացի այդ, հաշվի առնելով, որ մեր հասարակությունը միատարր է, իսկ ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների հետ գտնվում ենք բարիդրացիական հարաբերությունների մեջ, ահաբեկչության հնարավորությունը մոտենում է նվազագույնի:

Հասարակական տրանսպորտի մյուս տեսակների համեմատությամբ մետրոպոլիտենն ունի ամենաբարձր թողունակությունը, և պատահական չէ, որ 2008 թվականի տվյալներով աշխարհի բոլոր մետրոպոլիտենների միջին օրական ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 150 մլն ուղևոր, որը 34 անգամ ավելի է մեկ օրում տեղափոխված ավիատուղևորների քանակից[4, 3-4]: Այս համեմատությունն ինքնին խոսում է ինչպես մետրոպոլիտենի համակարգի հնարավորությունների, այնպես էլ դրա զարգացման սոցիալ-տնտեսական նշանակության մասին:

«Մետրո» միջազգային ասոցիացիայի տվյալներով, ԱՊՀ անդամ երկրներում, 2010թ. մետրոպոլիտենների տեսակարար կշիռը, քաղաքների ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում տատանվել է 4.1-52.9%-ի սահմաններում, ընդ որում, ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Կիև քաղաքում (52.9%), իսկ ամենացածրը Սամարայում (4.1%):

ԱՊՀ անդամ երկրների հիմնական չափանիշներով Երևանի մետրոպոլիտենին համադրելի մետրոպոլիտենների ուղևորափոխադրումների ծավալներն ամփոփված են աղյուսակ 2-ում, ըստ վերջինիս տվյալների՝ երևում է, որ օրինակ՝ Սամարայի և Եկատերինբուրգի մետրոպոլիտեններն ունենալով

թվով ավելի քիչ կայարաններ՝ համապատասխանաբար 9 և 7, և ավելի բարձր ուղեվարձ՝ 15% և 18%., 2011թ. փոխադրել են ավելի շատ ուղևոր՝ 22.3 մլն և 48.9 մլն, այսինքն՝ 1.2 և 2.4 անգամ ավելի Երևանի մետրոպոլիտենի ուղևորափոխադրումներից:

*Աղյուսակ 2*

ԱՊՀ անդամ երկրների մի շարք քաղաքների մետրոպոլիտենների ուղևորափոխադրումների ծավալները 2011թ.[5, 2-3]


Քաղաքներ	Ցուցանիշներ			
	Գծի երկարությունը (կմ)	Կայարանների թիվը	Ուղևորափոխադրումների ծավալը (մլն.մարդ)	Տոմսի արժեքը (ՌԳ-ռուբլի)
Երևան	12.1	10	20.0	8.00
Սամարա	11.5	9	22.3	15.00
Եկատերինբուրգ	8.5	7	48.9	18.00
Նովոսիբիրսկ	15.9	13	73.9	15.00
Նիժնի Նովոգորոդ	15.5	13	32.0	12.00

Նովոսիբիրսկ քաղաքի մետրոպոլիտենում, որտեղ գծի երկարությունը Երևանի մետրոպոլիտենից ավելի է ընդամենը 3.8 կմ-ով, կայարանների թիվը երեքով, իսկ ուղեվարձն ավելի է մոտ 10 անգամ, ուղևորափոխադրումները կազմել են 73.9 մլն մարդ կամ 3.7 անգամ ավելի Երևանից:

Երևանում տրանսպորտի տարբեր տեսակներով 1998-2010թթ. իրականացված ուղևորափոխադրումների ծավալների դինամիկան ներկայացվում է գծապատկեր 1-ում.



Վերգետնյա և ստորգետնյա տրանսպորտի տեսակներով Երևան քաղաքում իրականացված ուղևորափոխադրումների ծավալների դինամիկան



Ինչպես երևում է Երևանի մետրոպոլիտենի ուղևորափոխադրումների ծավալի ցուցանիշը 1998-2002 թթ. ունեցել է նվազման միտում և այդ 4 տարիների ընթացքում նվազել է 25%-ով (20.1 մլն ուղևորից նվազել է մինչև 15.1 մլն ուղևոր): Այնուհետև, նկատվել է աճ և 2008թ. այս նույն ցուցանիշը կազմել է 18.9 մլն ուղևոր, իսկ 2010թ՝ 19.8 մլն ուղևոր կամ 2002թ. նկատմամբ աճել է 31.2%-ով [7, 331-333]:

Մայրաքաղաքի ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում 1998-2006թթ. նվազել է նաև մետրոպոլիտենի տեսակարար կշիռը (1998թ. 12.6%-ից նվազել է և 2006թ. կազմել 6.3%), իսկ 2007-2010թթ. նկատվել է աճ տարեկան միջինը 0.5%-ով [8, 330-335]: Չնայած վերջին տարիներին գրանցված աճին, այս ցուցանիշով ևս, Երևանի մետրոպոլիտենն ԱՊՀ ամուրի երկրների մետրոպոլիտենների շարքում զբաղեցրել է վերջին տեղը: Համեմատության համար նշենք, որ օրինակ, Եկատերինբուրգում այդ նույն ցուցանիշը կազմել է 11.8%, իսկ Նովոսիբիրսկում՝ 43.1% (2011թ. տվյալներով): Այսպիսով՝ այս վերլուծությունը նույնպես ցույց է տալիս, որ մետրոպոլիտենը

զարգացող տրանսպորտային միջոց է և ունի մի շարք առավելություններ:

Շուկայական տնտեսությանն անցման սկզբնական փուլում, մետրոպոլիտենի ուղևորափոխադրումների մակարդակն ուներ աճի միտում: Այն կտրուկ աճել է և 1990թ. 51.2 մլն ուղևորից 1993թ. հասել է իր գագաթնակետին՝ կազմելով 73.9 մլն ուղևոր, այսինքն՝ 1993թ. ուղևորների փոխադրման մակարդակը 1990թ. նկատմամբ աճել է 44.3%-ով, այնուհետև հետագա տարիներին նկատվել է նվազում այս ցուցանիշի գծով՝ 1996թ. կազմելով 50%, իսկ 2002թ.՝ 70.5% (15.1 մլն ուղևոր): 1993թ. հաջորդող տարիներին ուղևորահոսքի կրճատման պատճառներից կարելի է նշել այն, որ տրանսպորտի մյուս տեսակների կողմից մրցակցության պայմաններում մետրոպոլիտենը բավարար ճկունություն չուներ, ինչպես նաև համապատասխան գնային քաղաքականություն չէր վարում կանխելու համար ուղևորահոսքի կրճատումը: 2003թ. սկսած նկատվում է ուղևորահոսքի աճի միտում չնչին չափով, որը պայմանավորված է նրանով, որ քաղաքային ուղևորափոխադրումների ծավալը մեծացել է այնքան, որ վերգետնյա տրանսպորտը լիովին չի բավարարում փոխադրումների նկատմամբ ուղևորների պահանջը: Դրա հետ մեկտեղ, լինելով Երևան քաղաքի հանրային տրանսպորտի անբաժանելի մասը, մետրոպոլիտենը հանդես է գալիս որպես հուսալի և արագընթաց, ուղևորների սպասարկման բարձր կուլտուրայով տրանսպորտային միջոց:

Այսպիսով՝ 2004թ. ուղևորափոխադրումների մակարդակը 2003թ. համեմատ աճել է 1.8%-ով՝ 16.2 մլն-ից հասնելով 16.5 մլն-ի, ընդ որում կրճատվել է անվճար երթևեկող ուղևորների թվաքանակը 3.496 մլն-ից հասնելով 2.778 մլն. ուղևոր, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ նվազել է 20.5%-ով [10, 7]: 2008թ. ուղևորափոխադրումների մակարդակը կազմել է 18.9 մլն մարդ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է 9.3%-ով (17.2 մլն ուղևոր), իսկ անվճար երթևեկող ուղևորների թվաքանակը կազմել է 1.650 հազ. մարդ, որը նախորդ տարվա

նույն ցուցանիշի համեմատ նվազել է 5.3%-ով կամ 91 հազ. ուղևորով:

Մետրոպոլիտենի միջին օրական ուղևորափոխադրումների ծավալը 2010թ. կազմել է 54400 ուղևոր, որը 2008թ. համեմատ ավելացել է 47.4%-ով (17 500 մարդ), իսկ 2005թ. նկատմամբ՝ աճը կազմել է 25.4% (11 000 մարդ):

Մետրոպոլիտենի ուղևորափոխադրումների վրա ազդում է նաև սեզոնայնության գործոնը, մասնավորապես, ուղևորահոսքի աճ նկատվում է հիմնականում գարնան և աշնան ամիսներին: Համեմատելով կարող ենք ասել, որ օրինակ, 2010թ. մարտ ամսին միջին օրական ուղևորափոխադրումները նախորդ ամսվա միջին օրական ուղևորափոխադրումների նկատմամբ աճել է 11.5%-ով: Աշնան ամիսներին նկատվող փոփոխությունը պայմանավորված է հիմնականում ուսումնական տարվա սկզբի և ուսանողների հոսքի ավելացման հետ[11, 3]:

Երևանի մետրոպոլիտենն ունի 70 վագոն, որոնցից շահագործման մեջ է 42, իսկ անընդհատ շարժման մեջ՝ 26 վագոն (13 շարժակազմ)՝ աշխատանքային օրերին և 24 վագոն (12 շարժակազմ)՝ հանգստյան օրերին:

Երևանի մետրոպոլիտենը նախագծվել և կառուցվել է Խորհրդային Միության տարիներին, աշխատել է 4 վագոնով, սակայն տարեցտարի ուղևորահոսքի անկման պատճառով նվազել է վագոնների բեռնվածության աստիճանը և էլեկտրաէներգիայի անտեղի վատնումը բացառելու նպատակով, վագոնների քանակը հասցվել էր 2-ի: Հարկ է նշել, որ վագոնների միջին բեռնվածությունը հաշվարկվում է որոշակի մեթոդիկայով: Այսպես, ԱՊՀ անդամ երկրների մետրոպոլիտեններում կիրառվող տեխնիկա-տնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդական ցուցումների համաձայն, վագոնների միջին բեռնվածությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով [11, 9].

$$H = AL / (ML)_{\text{pass}} \quad (1), \text{ որտեղ՝}$$

**AL** - ուղևորաշրջանառությունն է,

**(ML)<sub>pass</sub>** - վագոնների վազքն ուղևորներով:

Երևանի մետրոպոլիտենի համար այս ցուցանիշը 2008թ. կազմել է ընդամենը 26 ուղևոր.

$H_{vag} = 71.9$  մ/ն/ 2772.5 հազ. = 25.9 ուղևոր

իսկ 2010թ. այս նույն ցուցանիշը կազմել է 29 ուղևոր.

$H_{vag} = 75.5$  մ/ն/2605.8 հազ. = 28.9

Այսինքն՝ Երևանի մետրոպոլիտենի վագոնների միջին բեռնվածությունը 2010թ. կազմել է մոտ 29 ուղևոր, երբ վագոնների նստատեղերի թիվը 40 է, իսկ «պիկ» ժամերին թույլատրելի առավելագույն տեղատարողությունը շուրջ 200 ուղևոր: Չնայած այն հանգամանքին, որ 2010թ. այս ցուցանիշը 2008թ. համեմատությամբ աճել է 11.5 %-ով, այնուամենայնիվ, տվյալներից պարզ է դառնում, որ Երևանի մետրոպոլիտենն իր հնարավորություններն օգտագործում է խիստ անարդյունավետ և անհրաժեշտության դեպքում վերջինս կարող է տեղափոխել շուրջ յոթ անգամ ավելի ուղևոր:

Մետրոպոլիտենի ուղևորահոսքերի մեծությունը բնութագրող մյուս կարևոր ցուցանիշն ուղևորահոսքերի միջին խտությունն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\Gamma_{\pi} = AL^{cp} / L_{\text{ճ}}^{cp} \quad (2), \text{ որտեղ՝}$$

$AL^{cp}$ -ուղևորաշրջանառությունն է (ուղևոր/կմ),

$L_{\text{ճ}}^{cp}$  -գծի միջին տարեկան երկարությունը (կմ) [12, 10]:

2010թ. վերոհիշյալ ցուցանիշը կազմել է 6239 ուղևոր/կմ (75.5 մ/ն/12.1) կամ 2008թ. (5942 ուղևոր/կմ) համեմատությամբ այն աճել է 4.9 %-ով:

Վերը ներկայացված վերլուծությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ չնայած մետրոպոլիտենի հնարավորությունների թերօգտագործմանը, այնուհանդերձ մետրոպոլիտենի զարգացումը մնում է քաղաքային հասարակական տրանսպորտի խնդրի լուծման հիմնական այլընտրանքը:

Ուսումնասիրելով աշխարհի մի շարք զարգացած և զարգացող երկրների տրանսպորտային համակարգերը՝ ստորգետնյա տրանսպորտի օրինակով, նկատում ենք, որ Երևանի մետրոպոլիտենը դեռևս շատ մեծ կատարելագործման հնարավորություններ ունի, որը կարող է առնչվել ցանցի ընդլայնման,

ուղևորափոխադրումների տեսակարար կշռի ավելացման, էկոլոգիական հիմնահարցերի տեսանկյունից և այլն: Այդ իսկ պատճառով Երևանում տրանսպորտի համակարգի զարգացումը պետք է խարսխվի ոչ թե երթուղային տաքսիների և ավտոբուսների ցանցի ընդլայնման վրա, այլ մետրոպոլիտենի ցանցի ընդլայնման և ուղևորափոխադրումների ծավալի ավելացման վրա:

Կատարելով համադրություն Երևանի մետրոպոլիտենի և ԱՊՀ անդամ երկրների մի շարք քաղաքների մետրոպոլիտենների ուղևորափոխադրումների ցուցանիշների միջև՝ նկատում ենք, որ Երևանը թեկուզ սահմանել է ամենացածր գինը, սակայն ուղևորափոխադրումների ծավալով 2011թ.-ին չի գերազանցել 20 միլիոնը, իսկ դա նշանակում է, որ ուղևորափոխադրումների ընդլայնման ներուժային հնարավորություններն առկա են և ճիշտ քաղաքականության և հեռանկարային զարգացման ծրագրերի միջոցով այն կարելի է ավելացնել 2-3 անգամ: Վերջինս կարող է լուրջ ֆինանսական հոսքերի հիմք հանդիսանալ և ուղղվել համակարգում առկա խնդիրների լուծմանը:

***Առանցքային հասկացություններ.*** հասարակական տրանսպորտ, տրանսպորտային համակարգ, մետրոպոլիտեն, երթուղային տաքսիներ, ավտոբուսների ցանց, բարձր թողունակություն, տրանսպորտային խցանումներ, հաղորդակցման արագություն, ուղևորափոխադրումների ծավալ, ստորգետնյա տրանսպորտ, ուղևորահոսքի աճ, հնարավորությունների թերօգտագործում, ֆինանսական հոսքեր:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Международная Ассоциация, “Метро”, сборник статей, Москва 2009г., 25с.:
2. RATP International, Transportatiton organization, Paris, 2008, 65p.
3. Union Internationale des transports Pablions, November, 2008  
<http://www.uitp.org/events/2008/milan/en/>

4. Международная Ассоциация, “Метро”, сборник статей, Москва 2008г., 30 с..
5. Международная Ассоциация, “Метро”, сборник статей, Москва 2011г., 33с.
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2001թ., 540 էջ
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2005թ., 541 էջ
8. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2010թ., 549 էջ
9. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2011թ., 594 էջ
10. «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ հաշվետվության տվյալներ, 1990-2010թթ., էջ 10:
11. “Методические указание по расчету технико-экономических показателей эксплуатационной работы метрополитенов”, Москва, “Транспорт” 1985, 40 с.

**Т. Р. САРГСЯН**  
**АНАЛИЗ СРАВНИТЕЛЬНЫХ ПРЕИМУЩЕСТВ И**  
**ПРОБЛЕМ РАЗВИТИЯ ЕРЕВАНСКОГО**  
**МЕТРОПОЛИТЕНА**

**Резюме**

Основной целью представленной статьи является выявление проблем в Ереванском метрополитене. С этой целью приводятся и анализируются показатели трудовой деятельности, в частности, показатель перевозок пассажиров. Для выявления причин провели сравнительный анализ с другими метрополитенами стран СНГ.

Сопоставив показатели пассажироперевозок метрополитенов ряда стран СНГ основной вывод сводится к тому, что есть потенциальные возможности роста пассажиропотока. С

помощью перспективных программ, последние могут стать основой серьезных финансовых потоков и направляться на решение задач, существующих в системе.

**Ключевые понятия:** транспортная система, общественный транспорт, метрополитен, высокая пропускная способность, транспортные заторы, маршрутные такси, автобусная сеть, объем перевозок пассажиров, подземный транспорт, рост пассажиропотока, скорость коммуникации, финансовый поток.

## **T. R. SARGSYAN COMPETITIVE ADVANTAGES ANALYSE AND DEVELOPMENT ISSUES OF THE EREVAN SUBWAY**

### **Summary**

The aim of this article is to identify the existing problems of Yerevan subway. For this purpose the main operational indicators were analysed and evaluated, with specific focus on passenger transfer volumes. To identify the root causes of the problems, comparative analysis of CIS subways' identical indicators was conducted. The results revealed untapped potential for passenger traffic growth in Yerevan subway. Through proper policies and forward looking strategic development projects Yerevan subway can ensure sizeable financial flows, which further could be directed to resolving the main problems of the system.

**Key concepts:** *public transportation, transportation system, subway, minibuses, bus network, high throughput, traffic jams, communication speed, passenger transfer volume, underground transportation, passenger traffic growth, missed opportunities, financial flows.*

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ա. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում գլոբալացման գործընթացը ոչ միայն նոր հնարավորություններ է ընձեռում տնտեսության զարգացմանը, այլև նոր ռիսկեր ու վտանգներ է պարունակում: Վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ևս մեկ անգամ ցույց տվեց շուկայական ինքնակարգավորման համակարգի ոչ կատարյալ լինելը: Իհարկե, դա նորություն չէր համաշխարհային հանրության համար: Նմանատիպ ճգնաժամեր են առաջացել նաև նախկինում: Հենց այդպիսի իրադարձություններն են պարտադրում կապիտալիստական երկրներին վերանայել շուկայական տնտեսավարման համակարգի գործունեության շրջանակները՝ մեծացնել պետական միջամտության աստիճանը: Չուտ կապիտալիստական տնտեսություն վաղուց արդեն գոյություն չունի (եթե նույնիսկ երբևէ գոյություն է ունեցել): Նույնիսկ ամենաազատական երկրներում պետության միջամտությունը դուրս է դասականների կողմից սահմանված գործառույթների շրջանակներից: Այսօր պետությունը ոչ միայն փորձում է շտկել շուկայական համակարգի թերությունները, այլ նաև կանխատեսում ու պլանավորում է տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները: Չնայած կանխատեսումը և պլանավորումը պլանային տնտեսության հիմնական տարրերն են, այնուամենայնիվ դրանք սկսեցին կիրառվել նաև կապիտալիստական երկրներում: Կարծում ենք, որ դա բնական է, քանի որ սկզբնական շրջանում ռազմավարական պլանավորման տեսության հիմնադիր Ն.Կոնդրատևի գաղափարները փորձարկվել են պետության կողմից չկարգավորվող տնտեսավարման համակարգում: Մասնավորապես նա նշում



է. «Միլիոնավոր անկախ գյուղացիական տնտեսություններ իրականացնում են արտադրական և տնտեսական գործունեություն: Այդ գործունեության ընթացքում նրանք իրենց անձնական շահն են հետապնդում: Այդ ամենը ստիպում է հարմարվել շրջակա բնական ու հասարակական միջավայրին: Պետական մարմիններն իրենց հերթին ագրոտնտեսական օգնության միջոցառումներով (մելորացիա, վարկերի, սերմերի, արտադրության գործիքների տրամադրում) նպաստում են գյուղատնտեսության զարգացմանը: Այդպիսով, գյուղատնտեսության տարերային զարգացման մեջ նրանք ներմուծում են պլանավորման տարրեր»[4,615]: Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է ոչ թե ապրանք արտադրողների նկատմամբ պետական դիկտատի կիրառմանը, այլ նրանց գործունեության վրա պետության անուղղակի ազդեցությանը:

Շուկայական տնտեսության պայմաններում պետական կարգավորման տեսության հիմանդիր Քեյնսի հետևողը Ջ.Հեյլբրեյթը եկավ այն եզրակացության, որ շուկայական հարաբերություններն առավել արդյունավետ են «պլանային կապիտալիզմի» պայմաններում: Հեյլբրեյթի գաղափարները գործնական կիրառություն ունեցան Ճապոնիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Շվեդիայի տնտեսությունների պլանավորման ընթացքում: «Շուկա թե պլան» հիմնախնդիրը այսօր լուծվում է հետևյալ մոտեցմամբ. «շուկա՝ որքան հնարավոր է, պլան՝ որքան անհրաժեշտ է»: Միաժամանակ պետք է նշել, որ գոյություն ունեն շուկայական և պլանային կարգավորման մեխանիզմների տարբեր հարաբերակցությունների վրա հիմնված համակարգեր՝ առավելապես ազգային տնտեսության ինքանակարգավորման շուկայական մեթոդների կիրառումից (ԱՄՆ, Գերմանիա և այլն) մինչև այնպիսիք, որտեղ պետությունը վերարտադրության գործընթացի պլանավորման գործում էական դերակատարություն է ստանձնում (Հարավային Կորեա, Ճապոնիա, Ֆրանսիա և այլն): Ազգային տնտեսու-

յան պլանավորման գործընթացը կարևորվում է հատկապես ճգնաժամային իրավիճակներում:

Ռազմավարական պլանները ներառում են ազգային տնտեսության երկարաժամկետ զարգացման հիմնական ուղղությունները: Կարճաժամկետում այդ ուղղությունները տնտեսավարող սուբյեկտների տեսանկյունից միգուցե այդքան էլ գրավիչ չեն, սակայն պետության զարգացման համար ամենաարդյունավետ ուղին են: Շուկայական տնտեսության մեջ պլանավորումը երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման մեթոդ ու այդ գործընթացների վրա ազդող գործիք է: Դրա նպատակն է ապահովել շուկայական մեխանիզմներով չկարգավորվող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը:

Շուկայական տնտեսությունում առավել տարածված է ինդիկատիվ պլանավորումը: Ինդիկատիվ ծրագրերը մեկ փաստաթղթի մեջ ներառում են սոցիալ-տնտեսական զարգացման գաղափարներ, տնտեսության զարգացման կանխատեսումներ, տարբեր ոլորտների զարգացման պետական ծրագրեր, ինչպես նաև տնտեսության մակրոտնտեսական կարգավորման համալիր միջոցառումներ: Հանդիսանալով մակրոտնտեսական զարգացման պետական ծրագրավորման առավել տարածված ձև՝ ինդիկատիվ պլանավորումը տնտեսական համակարգի կարգավորող չափանիշների ձևավորման գործընթացի ամբողջություն է, որը բնութագրում է երկրի տնտեսական իրավիճակն ու զարգացումը: Ինդիկատիվ պլանավորման պարագայում պետությունը, հաշվի առնելով հասարակության հետաքրքրությունները, շրջանների կարիքները և շուկայի սուբյեկտների շահերը, մշակում է ազգային տնտեսության ու մասնավոր հատվածի տնտեսական զարգացման պլաններ, սահմանում է կոնկրետ տնտեսական կողմնորոշիչներ:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսության ռազմավարական պլանավորման մեխանիզմներ համեմատաբար վերջերս են կիրառվում: Վերափոխումների սկզբնական փու-

լում տնտեսական կանխատեսումը և տնտեսության հետագա զարգացման պլանավորումը սահմանափակվում էր պետական բյուջեի պլանավորման գործընթացով, մասամբ նաև կառավարության գործունեության ծրագրերով: Տնտեսության երկարաժամկետ պլանավորման առաջին ծրագրերից է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որը Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է 2003 թվականից: Մենք այն կարծիքին ենք, որ տնտեսության երկարաժամկետ զարգացման ծրագրեր վաղուց էր անհրաժեշտ կիրառել: Համաշխարհային փորձը վկայում է, որ նման ծրագրերի կիրառությունը բխում է հատկապես վերափոխումների շրջանում գտնվող երկրների առանձնահատկություններից:


Իհարկե զարմանալի է, որ հանրապետությունում որպես առաջին ռազմավարական նպատակ ընտրվեց աղքատության հաղթահարումը: Կարծում ենք, որ տնտեսության զարգացման տվյալ փուլում կառուցվածքային փոփոխությունների հիմնախնդիրն առավել արդիական էր ու կարող էր որպես գերնպատակ սահմանվել: Էլ ավելի զարմանալի էր, որ այդ փաստաթուղթը 2008 թվականին վերանվանվեց «Կայուն զարգացման ծրագիր»: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, վերափոխումների շրջանում գտնվող երկրներում կիրառվող երկարաժամկետ առաջին ծրագրերը կոչվում էին «Ազգային զարգացման համալիր պլաններ»: Իհարկե, կարող է թվալ, թե ծրագրի անվանումը այդքան էլ կարևոր չէ, սակայն պետք է նշել, որ անվանումից է բխում բովանդակությունը: Այնուամենայնիվ, կառավարությունը նախընտրեց երկարաժամկետ նպատակ սահմանել աղքատության հաղթահարումը, որից պետք է բխեին նաև հետագա միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման ծրագրերը:

Այժմ վերլուծենք «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» և «Կայուն զարգացման ծրագիր» կառուցվածքն ու փորձենք պարզել, թե որքանով են դրանք համապատասխանում ռազմավարական պլանավորման ծրագրերի

կառուցման մեթոդոլոգիային: Գծագիր 1-ում բերված է պետական ռազմավարական պլանավորման մեթոդոլոգիան:

Ըստ էության, յուրաքանչյուր ծրագրի հիմնական հատվածը նպատակի սահմանումն է: Պետական ռազմավարական պլանավորման նպատակ կարող է լինել սոցիալ-տնտեսական, էկոլոգիական և տարածքային զարգացումն ու նորարարական տեխնոլոգիաների ներդրումը: Հաշվի առնելով իրական պայմաններն ու ներքին և արտաքին սահմանափակումները՝ կառավարությունը կարող է ակնկալել զարգացման օպտիմալ ուղղվածություն:

**Գծագիր 1. Պետական ռազմավարական պլանավորման մեթոդոլոգիան [5]**



Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով սահմանվեցին այն սպառնալիքները, որոնք բխում էին աղքատության և անհավասարության ձևավորված մակարդակից: Մասնավորապես.

- Հասարակության բեռնացման առկա վիճակի շարունակականությունը սպառնում է խորացնել հասարակական շերտերի փոխադարձ օտարումը, որն իր հերթին վտանգում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու հզոր պետության կայացումը:
- Աղքատության մեծ չափերը խոչընդոտում են քաղաքացիական հասարակության և քաղաքացիական համաձայնության կայացմանը և հետևաբար իրավական և ժողովրդավարական պետության կայացմանը:
- Աղքատների բազմահազարանոց խավը ավելի ու ավելի հետ է մնում մարդկային զարգացման ընդհանուր օրինաչափություններից, որոնք կհանգեցնեն երկրի ընդհանուր մարդկային կապիտալի որակազրկմանը:
- Աղքատության տարածվածության պայմաններում խիստ սահմանափակում են քաղաքացիների ինքնահաստատման և ինքնաիրացման հնարավորությունները:
- Տևական աղքատացման գործընթացը հասարակության անդամների մեծամասնության մեջ արմատավորում է պասիվության, հոգեբանական դեպրեսիայի, նիհիլիզմի և հոռետեսական տրամադրություններ, որի հետևանքով պակասում է մոտիվացիան, նախաձեռնողականությունն ու մասնակցությունը երկրի հասարակական, տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքին[1,7]:

Սպառնացող վտանգները կանխարգելելու և բնակչության մեծամասնությանը առկա ծանր վիճակից դուրս բերելու համար **ԱՀՌԾ-ում նպատակ է դրված կրճատել աղքատություն-**

**նը**, որպեսզի այն դադարի երկրի տնտեսական, սոցիալական ու մարդկային առաջադիմությունն արգելակող և հասարակությունը կազմալուծող գործոն լինել [1,38]:

Այս տեսակետից ԱՀՌԾ-ում սահմանված նպատակներն, ինչպես նաև դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները վերացական են: Օրինակ, ԱՀՌԾ-ի գլուխ 4-ում նշվում է. «Աղքատության հաղթահարման տեսակետից կարևոր նախապայման է կայուն, բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովումը»[1,38]: Առաջին հայացքից կարծես թե ամեն ինչ բնական է. տնտեսական աճը նպաստում է բնակչության եկամուտների աճին, իսկ վերջինս էլ բերում է աղքատության մակարդակի կրճատմանը: Ծրագրում առկա նախադասությունը մեզ համար ընդունելի կլիներ, եթե այն լիներ դասախոսության տեքստի մի մաս: Որպես ռազմավարական ծրագրի գլխավոր նպատակ՝ այն ընդունելի չէ, որովհետև հետագայում էլ ծրագրի հեղինակները չեն մանրամասնում, թե ինչպես է անհրաժեշտ մնան աճ ապահովել:

Նույնը կարող ենք ասել նաև 2008 թվականին ընդունված «Կայուն զարգացման ծրագրի» մասին: Պետությունը կայուն զարգացումը պլանավորման գերակա նպատակ կարող է համարել միայն այն դեպքում, երբ տնտեսությունը կայացած է, իր ուրույն տեղն ու դերը ունի համաշխարհային տնտեսությունում, ինչը չի կարելի ասել Հայաստանի Հանրապետության տնտեսության մասին: Հետևապես, դեռևս չկայացած տնտեսությունում կայուն զարգացման նպատակ ունենալը անիմաստ է:

Կարելի է ասել, որ «Կայուն զարգացման ծրագիրը» ԱՀՌԾ-ից տարբերվում է միայն անվանումով: Հետևապես ծրագրի գլխավոր նպատակները, ըստ էության, էական փոփոխության չեն ենթարկվել. «Չնայած ծայրահեղ աղքատությունը կարելի է համարել հիմնականում հաղթահարված, աղքատությունը դեռ ներկայացնում է լուրջ սոցիալական հիմնահարց, որն ի վիճակի է վտանգել երկրի սոցիալական կայունությունը և երկարաժամկետ հեռանկարում տնտեսական

զարգացման արգելք հանդիսանալ: Այդ պատճառով բնակչության բարեկեցության աճը և աղքատության հաղթահարումը, ներառյալ ծայրահեղ աղքատության վերացումը, կշարունակեն մնալ «Կայուն զարգացման ծրագրի» հիմնական նպատակներից մեկը»[2,33]:

Ռազմավարական պլանի հորիզոնը պետք է բավարար լինի խոշոր հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար: Ըստ էության, առավել երկարաժամկետ ռազմավարական պլանների համար օպտիմալ ժամանակահատվածը 20-30 տարի է: Միաժամանակ երկարաժամկետ ռազմավարական պլանները համատեղվում են միջնաժամկետ պլանների հետ, որոնց կատարման ժամանակահատվածը կազմում է 5-10 տարի: Այս առումով ինչպես ԱՀՌԾ-ն, այնպես էլ «Կայուն զարգացման ծրագիրը» երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր են, քանի որ գոյություն ունեն նաև միջնաժամկետ ծախսերի կատարման ծրագրեր: Հետևապես, ծրագրերի նվազագույն ժամանակահատվածը պետք է լինի 20 տարի, այնինչ կանխատեսումները կատարված են 13-14 տարվա համար: Բացի դրանից, եթե հաշվի առնենք, թե ինչպիսի հիմնական նպատակներ են սահմանված ծրագրերով, ապա պարզ կդառնա, որ ԱՀՌԾ-ի և «Կայուն զարգացման ծրագրի» հորիզոնը կարճ է սահմանված:

Մովորաբար պետական ռազմավարական պլանավորման օբյեկտ է համարվում տնտեսության զարգացումը, նրա հիմնական տարրերի՝ ՀՆԱ-ի աճի, ինֆլյացիայի, ներդրումների և այլն, դինամիկայի կանխատեսումը: Սակայն այստեղ անհրաժեշտ է գիտականորեն հիմնավորել մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունն ու փոխկախվածությունը: Տնտեսական դինամիկայի հետազոծման առաջին հերթին կախված է առաջնային գործոններից և դեմոգրաֆիական ու բնական էկոլոգիական սահմանափակումներից: Իհարկե, Հայաստանի Հանրապետությունում մշակված երկարաժամկետ երկու ռազմավարական ծրագրերում էլ առկա են մակրոտնտեսական ցուցանիշների համապատասխան կանխա-



տեսումներ, սակայն տնտեսագիտորեն դրանց փոփոխությունները հիմնավորված չեն: Դեմոգրաֆիական և բնական էկոլոգիական սահմանափակումներն ընդհանրապես բացակայում են ներկայացված ծրագրերից:

Ռազմավարական պլանավորման երկարաժամկետ հորիզոնը պահանջում է տնտեսական, ցիկլային և այլ դինամիկայի անխուսափելի տատանումների հաշվառում ըստ շրջափուլերի՝ ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ: Անհրաժեշտ է նախօրոք գնահատել, թե երբ է գալու հերթական ճգնաժամը, որոշել դրա բնույթն ու խորությունը, հետևանքները, սահմանափակումները: Այս ամենը անհրաժեշտ է ներառել ռազմավարական պլանների մեջ որպես հակաճգնաժամային մջոցառումների ծրագիր: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ցիկլային տատանումները, որոնք կարող են ամբողջությամբ չհամընկնել: Նման վերլուծություններն իսպառ բացակայում են վերը նշված ծրագրերից նաև այն պատճառով, որ հայրենական տնտեսագիտական միտքը իվիճակի չէ նմանօրինակ խորը վերլուծություններ կատարել: Այստեղ խոսքը ոչ թե առանձին տնտեսագետների մասնագիտական ունակությունների, այլ Հայաստանում նման հիմնախնդիրներով զբաղվող ինստիտուտների բացակայության մասին է:

Շուկայական տնտեսությունում ռազմավարական պլանավորումը ինդիկատիվ բնույթ ունի: Այն, որ ԱՀՌԾ-ն և Կայուն զարգացման ծրագիրը ունեն ինդիկատիվ բնույթ, չի կարող հերքվել, սակայն ծրագրերով նախատեսվող զարգացումները ուղենիշ չեն տնտեսվարող սուբյեկտների համար: Սա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ նման ծրագրերը դեռևս շատ կարճ ժամանակահատված է, որ կիրառվում են: Բացի դրանից, պետությունը վստահություն չի ներշնչում ոչ միայն արտասահմանյան ներդրողների համար, այլ առավել շատ ներքին տնտեսվարողների շրջանում:

Ռազմավարական պլաններն առավել իրատեսական են, երբ դրանք մշակվում են առաջնային հաշվեկշիռների համա-

կարգի հիման վրա: Իհարկե, նոբելյան դափնեկիր Վ. Լեոնտևի հաշվեկշռային մեթոդը բավականին հայտնի է հայրենական գիտական շրջանակներում, հետևապես կարծում ենք, որ այս առումով ներկայացված փաստաթղթերն ամբողջովին համապատասխանում են նմանօրինակ ծրագրերին ներկայացվող պահանջներին:

Սոցիալ-տնտեսական համակարգը բազմաչափանիշային ու բազմամակարդակ է: Այն բաժանվում է տարբեր չափանիշներով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ռազմավարական պլանների համաձայնեցման գաղափարի հիման վրա ձևավորել հանրապետության տնտեսության զարգացման ռազմավարական պլանավորման ամբողջական հիերարխիա: Ըստ այդմ, հանրապետական ռազմավարական պլանները պետք է հիմնվեն մարզային ռազմավարական պլանների վրա, իսկ վերջիններս էլ պետք է արտահայտեն երկրի տնտեսության միասնական մակրոտնտեսական առաջնահերթությունները: Այս առումով անելիքներ դեռ շատ կան: ԱՀՌԾ-ը և «Կայուն զարգացման ծրագիր»-ը միակ ռազմավարական պլաններն են, որոնք դրվում են կառավարության գործունեության հիմքում: Չնայած վերջին տարիներին մարզերի զարգացման ծրագրեր նույնպես մշակվում են, սակայն դրանք հիմնականում դեկլարատիվ բնույթ ունեն:

Այս ամենից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ռազմավարական պլանավորման գործընթացով պետք է զբաղվեն բարձր մակարդակի պրոֆեսիոնալ մասնագետներ: Ոչ պրոֆեսիոնալությունը, ռազմավարական պլանավորման մտածելակերպով իրականացնողների և որոշումներ կայացնողների բացակայությունը կարող է էական վնաս հասցնել երկրի տնտեսությանը: Միաժամանակ անհրաժեշտ է ապահովել համապատասխան մասնագետների անընդհատ վերապատրաստումը, ինչպես նաև որակավորման բարձրացումը:

Պետության ռազմավարական-ինովացիոն գործառույթը ամենակարևորներից մեկն է և այն պետք է օրենսդրորեն հաստատվի: Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ գո-

յություն չունի ռազմավարական պլանավորման վերաբերյալ օրենք: Առանց ռազմավարական պլանավորման նպատակները, կառուցվածքը, մշակման կարգը սահմանող օրենքի, կարծում ենք, անհնար է ակնկալել պետական պլանավորման համակարգի արդյունավետ գործունեություն:

Ռազմավարական պլանավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում դեռևս նոր է ներդրվում և բնականաբար այս գործընթացը չի կարող գերծ լինել թերություններից: Ընդհանուր առմամբ կարծում ենք, որ այս գործընթացում կառավարությունը որոշակի հաջողություններ ունեցել է. մասնավորապես՝ Հայաստանն ունի լավ կազմված բյուջետային գործընթաց: Բյուջետային գործընթացը հիմնականում բաժանված է երկու փուլի՝

- միջնաժամկետ ծախսերի ծրագրի պատրաստում, որը պարունակում է մակրոֆինանսական դաշտը, ընդհանրացված միջոցների փաթեթը ու ֆինանսական քաղաքականության առանցքային գերակայությունները,
- բյուջեի պատրաստման մանրամասն գործընթաց:

Թեև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքն ինքնին չի սահմանում բյուջետային մանրամասն օրացույց, սակայն պահանջում է բյուջեի պատրաստումը սկսելու գործընթացի մասին վարչապետի կարգադրություն, որը պարունակում է մանրամասն ժամանակացույց: Կարծում ենք, որ նման մակարդակով պետք է մշակվի և իրականացվի նաև երկարաժամկետ ռազմավարական պլանների ամբողջ գործընթացը: Ցանկալի է, որ կառավարության կազմում անկախ որևէ մարմին, միգուցե կառավարությանն առընթեր որևէ նոր ծառայություն, օրինակ կառավարությանն առընթեր «Ռազմավարական պլանավորման ծառայություն» ստեղծվի: Իհարկե, մեր երկրի պետական ծառայության ուժճացված համակարգում նոր ստորաբաժանման ստեղծումը կարող է շռայլություն համարվել, բայց իր գործառույթներով

այս կառույցը մեր երկրի տնտեսական զարգացման համար կարևոր օղակ կարող է դառնալ:

*Առանցքային հասկացություններ. ռազմավարական պլանավորում, ռազմավարական ծրագրեր, միջնաժամկետ ծախսային ծրագիր, կայուն զարգացման ծրագրի, աղքատության հաղթահարման ծրագիր, բյուջե, բյուջետային համակարգ, ինդիկատիվ պլանավորում:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան-2003, 155 էջ
2. Կայուն զարգացման ծրագիր, Երևան-2008, 312 էջ
3. Հայաստանի Հանրապետություն, Պետական ֆինանսների կառավարման բարեփոխումների առաջնահերթությունները, Համաշխարհային Բանկ-2010, 74 էջ
4. Кондратьев Н. Д. Большие циклы конъюнктуры и теория предвидения. М.: Экономика, 2002. С. 615
5. Методология стратегического планирования. <http://www.strategy.newparadigm.ru/strategy2.htm> /Մուտքի ամսաթիվը՝ 05.06.2012թ./

**А. А. САРГСЯН**

## **ВОЗМОЖНОСТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ СТРАТЕГИЧЕСКОГО ПЛАНИРОВАНИЯ ЭКОНОМИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

### **Резюме**

Роль государства как направляющей и регулирующей силы принимает особое значение в современных условиях функционирования РА, вставшей в конце XX в. на рыночный путь развития экономики.

Политика государства по созданию стимулов и условий для устойчивого экономического роста сегодня должна не только учитывать пространственные и региональные аспекты социально-экономического развития, но и воздействие глобальной системы мирового хозяйства подверженной кризисам. Отсюда - важность усиления роли государства в управлении развитием территорий и необходимость содействия со стороны Правительства РА процессу реализации стратегических приоритетов социально-экономического развития, повышения уровня и качества жизни населения, обеспечения высоких темпов устойчивого экономического роста, создания потенциала для будущего развития. Решение указанных задач невозможно без функционирования научно обоснованной системы стратегического планирования экономики, чему и посвящена данная статья.

**Ключевые понятия:** *стратегическое планирование, стратегические планы среднесрочных затрат, плана устойчивого развития, программа преодоления бедности, бюджет, бюджетная система, индикативно планирование.*

**A. A. SARGSYAN**  
**OPPORTUNITIES FOR IMPROVING THE STRATEGIC  
PLANNING OF THE ECONOMY IN THE REPUBLIC OF  
ARMENIA**

**Summary**

The state's role as a guiding and regulatory forces take special importance in the current operating conditions of RA, has hit the end of XX century. on the market path of economic development.

State policy to create incentives and conditions for sustainable economic growth today must not only take into

account the spatial and regional dimensions of socio-economic development, but also the impact of the global system of world economy prone to crises. Hence - the importance of strengthening the state's role in managing the development of territories and the need for assistance from the Government of the RA process of implementing the strategic priorities of socio-economic development, improving the level and quality of life, ensuring high rates of sustainable economic growth, create potential for future development. The solution of these problems is impossible without a functioning science-based strategic planning system of the economy, which is devoted to this article.

**Key concepts:** *strategic planning, strategic plans, medium-cost plan for sustainable development, poverty alleviation program, budget, budget system, indikativnogoe planning.*

## ISRAEL - INTELLECTUAL CAPITAL SUCCESS IN BRIEF

L.V. TUMYAN

